ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ
Հայաստանի Հանրապետության խորհրդարանական ընտրություններ
7 հունիսի 2026թ.

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՆԱԽՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ և ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՆԱԽՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2026 թվականի հունիսի 7-ի խորհրդարանական ընտրությունները ընտրողներին ապահովել են քաղաքական այլընտրանքների միջև իրական ընտրություն կատարելու հնարավորությամբ՝ ընդհանուր առմամբ լավ կազմակերպված գործընթացի պայմաններում: Քարոզարշավի ընթացքում արձանագրվել է արտերկրից ուղղակի ճնշում՝ առևտրային սահմանափակումների խստացման և անվտանգության սպառնալիքների տեսքով, որը նպատակ ուներ հօգուտ ընդդիմադիր ուժերի ոչ պատշաճ կերպով ազդել ընտրողների վրա: Քարոզարշավն աչքի է ընկել բարձր առճակատմամբ և պառակտող հռետորաբանությամբ, ինչպես նաև ձայների գնման և ընտրական այլ խախտումների վերաբերյալ մեղադրանքներով, որոնք հանգեցրել են ընդդիմության թեկնածուների և ակտիվիստների նկատմամբ բազմաթիվ քրեական վարույթների հարուցմանը, ինչի հետևանքով ընդդիմության բազմաթիվ աջակիցներ ձեռնպահ են մնացել քարոզարշավին ակտիվ մասնակցելուց: Այս հանգամանքները, ինչպես նաև պետական հատվածի աշխատակիցների նկատմամբ իշխող կուսակցության միջոցառումներին մասնակցելու նպատակով գործադրված ճնշումները և վերջերս ներդրված սոցիալական և տնտեսական միջոցառումները, մտահոգություններ են առաջացրել քարոզչություն իրականացնելու հնարավորությունների հավասարության առնչությամբ: Իրավական դաշտը ստեղծում է ժողովրդավարական ընտրությունների անցկացման ամուր հիմք, իսկ ընտրական վարչարարությունը վայելել է շահագրգիռ կողմերի վստահությունը: Նախընտրական ֆինանսավորման նկատմամբ անբավարար վերահսկողությունը և կարգավորումը սահմանափակել են թափանցիկությունը և հանրային վերահսկողության հնարավորությունները: Անկողմնակալ և վստահելի տեղեկատվություն ստանալու ընտրողների հնարավորությունների վրա բացասաբար են ազդել բևեռացված մեդիա միջավայրը, կողմնակալ լրատվական լուսաբանումը և մանիպուլյատիվ բովանդակության կիրառմամբ պառակտող առցանց քարոզարշավը: Ընտրության օրվա գործընթացները՝ դիտարկված ընտրատեղամասերի ճնշող մեծամասնությունում, ստացել են առավելապես դրական գնահատական:

Ընտրություններն անցկացվել են բազմակարծիք և խիստ բևեռացված միջավայրում: Քաղաքական բանավեճերը կենտրոնացած էին «խաղաղություն, թե՞ պատերազմ» երկընտրանքի շուրջ ձևավորված պառակտող նարատիվների, Հայաստանի և Ադրբեջանի միջև «Խաղաղության և միջպետական հարաբերությունների հաստատման մասին համաձայնագրի» իրականացման, շարունակվող սահմանադրական բարեփոխումների, ինչպես նաև երկրի ապագա աշխարհաքաղաքական կողմնորոշման վերաբերյալ մրցակցող տեսլականների շուրջ: Ընտրություններից առաջ այս պառակտումը շահարկվել է որպես ուղղակի ճնշման և արտաքին միջամտության հիմք. Ռուսաստանի Դաշնության պաշտոնատար անձինք սպառնացել են տնտեսական և անվտանգության ոլորտներում հետևանքներով, եթե Հայաստանը որոշի խորացնել հարաբերությունները Եվրոպական միության հետ: Սա տեղի է ունեցել Հայաստանի դեմ ուղղված հիբրիդային սպառնալիքների աճի և համակարգված արտաքին ազդեցության գործողությունների վերաբերյալ ավելի վաղ հրապարակված հաղորդումների ֆոնին: Իրավիճակն առավել բևեռացվել է կառավարության և Հայ Առաքելական Եկեղեցու առաջնորդության միջև առկա լարվածությամբ, ինչպես նաև մի շարք հայտնի ընդդիմադիր և կրոնական գործիչների նկատմամբ հարուցված քրեական վարույթներով, ներառյալ նախնական

կալանքի կիրառմամբ, որոնք, ի թիվս այլ նպատակների, ուղղված էին սահմանադրական կարգը իշխանության բռնի զավթումից պաշտպանելուն:

Ընտրություններն անցկացվել են վերանայված իրավական կարգավորումների հիման վրա, որն ապահովում է ժողովրդավարական ընտրությունների համար ամուր հիմք և անդրադառնում է ԺՀՄԻԳ-ի և Եվրոպայի խորհրդի «Իրավունքի միջոցով ժողովրդավարություն հանուն» եվրոպական հանձնաժողովի (Վենետիկի հանձնաժողով) մի շարք նախկինում ներկայացված առաջարկություններին: Փոփոխությունների մեծ մասն ընդունվել է 2021-2024 թվականներին իրականացված լայնածավալ հանրային քննարկումներից հետո, մինչդեռ 2026 թվականին կատարված որոշ լրացուցիչ փոփոխություններ ներդրվել են արագացված կարգով, սահմանափակ քննարկումների պայմաններում և առանց քաղաքական ուժերի լայն աջակցության, ընդ որում դրանցից մի քանիսն ընդունվել են ընտրությունների նշանակումից հետո, ինչը հակասում է ԵԱՀԿ պարտավորություններին և միջազգային լավագույն փորձին: Փոփոխությունների մեծամասնության արդյունքում բարելավվել է իրավական դաշտը, սակայն օրենսդրությունում դեռևս պահպանվում են որոշ բացեր և երկիմաստություններ, իսկ ԺՀՄԻԳ-ի և Վենետիկի հանձնաժողովի մի շարք առաջարկություններ շարունակում են մնալ չիրականացված:

Ընտրությունների վարչարարությունը իրականացնող մարմինը ապահովել է տեխնիկական նախապատրաստական աշխատանքների իրականացումը պրոֆեսիոնալ և արդյունավետ կերպով և վայելել է շահագրգիռ կողմերի վստահությունը իր տեխնիկական կարողությունների նկատմամբ: Կենտրոնական ընտրական հանձնաժողովի (ԿԸՀ) և ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների (ԸԸՀ) նիստերը, որպես կանոն, բաց են եղել դիտորդների համար և առցանց հեռարձակվել են, իսկ համապատասխան որոշումները հրապարակվել են ժամանակին, ինչը նպաստել է թափանցիկությանը: Որոշ դեպքերում բովանդակային քննարկումների սահմանափակ լինելը նվազեցրել է որոշումների կայացման գործընթացի թափանցիկությունը: Ընտրությունների վարչարարությունը իրականացնող մարմինը էական քայլեր է ձեռնարկել տեղամասային ընտրական հանձնաժողովների (ՏԸՀ) անդամների վերապատրաստման բարելավման ուղղությամբ և իրականացրել է ընտրողների իրազեկման համապարփակ միջոցառումներ, որոնց տեսանելիությունը տարբեր շրջաններում տարբեր էր: Չնայած գործընթացի ընդհանուր հասանելիության բարելավմանն ուղղված ջանքերին՝ բազմաթիվ ընտրական տեղամասեր շարունակում էին մնալ ոչ հասանելի հաշմանդամություն ունեցող ընտրողների համար:

Ընտրողների վերջնական ցուցակում ընդգրկված էր 2,503,976 ընտրող: Ընտրողների գրանցման գործընթացը, ընդհանուր առմամբ, եղել է ներառական և վայելել է հանրության վստահությունը, իսկ ընտրողներին տրամադրվել են բավարար հնարավորություններ՝ ստուգելու իրենց տվյալները և ներկայացնել ուղղումների պահանջներ: Թեև ընտրություններից առաջ ընտրացուցակներում ընդգրկվել են շուրջ 20,101 վերջերս Հայաստանի քաղաքացիություն ստացած տեղահանված հայ փախստականներ, ևս 6,000 դիմում ընտրության օրվա դրությամբ մնացել էր չքննված: Որոշ շահագրգիռ կողմեր դա վերագրել են դանդաղ և բյուրոկրատական ընթացակարգերին, ինչի հետևանքով այդ դիմորդները զրկվել են քվեարկելու հնարավորությունից: Ի հեճուկս միջազգային չափանիշներին և ԺՀՄԻԳ-ի և Վենետիկի հանձնաժողովի կողմից նախկինում ներկայացված առաջարկություններին՝ դատարանի որոշմամբ անգործունակ ճանաչված քաղաքացիները զրկվել են ընտրելու իրավունքից:

Թեկնածուների գրանցումն իրականացվել է ներառական և բաց եղանակով: Սակայն երկքաղաքացիություն ունեցող անձանց նկատմամբ սահմանված սահմանափակումները և դրանց հետ կապված քրեական պատասխանատվությունը, ինչպես նաև երկարատև ռեզիդենտության և լեզվի իմացության պահանջները չեն համապատասխանում Եվրոպայի խորհրդի և այլ միջազգային չափանիշներին և լավագույն փորձին: Անհատ թեկնածուների

առաջադրումը թույլատրված չէ, ինչը հակասում է ԵԱՀԿ պարտավորություններին: Տարբեր ինքնաբացարկներից, այդ թվում մի ամբողջ թեկնածուների ցուցակի ինքնաբացարկից հետո, ընտրություններին մասնակցելու համար գրանցվել է ընդհանուր 18 քաղաքական ուժ (16 կուսակցություն և 2 դաշինք) և 1,938 թեկնածու:

Քարոզարշավը եղել է ակտիվ և հիմնականում խաղաղ, սակայն կրել է խիստ բևեռացված և առճակատային բնույթ՝ զուգորդված սադրիչ հռետորաբանության բազմակի կիրառմամբ, այդ թվում՝ իշխող կուսակցության ցուցակը գլխավորող թեկնածուի կողմից: Այն կենտրոնացած էր խաղաղության, Ադրբեջանի հետ հարաբերությունների, տարածաշրջանային կայունության, տնտեսության և կոռուպցիայի դեմ պայքարի հարցերի շուրջ ուղերձների վրա, ընդ որում մի շարք օտարերկրյա քաղաքական գործիչներ հրապարակային միջամտություններ և աջակցություն էին ցուցաբերում իշխող կուսակցության օգտին: Քարոզարշավի ողջ ընթացքում զգալի տեղ է զբաղեցրել Ռուսաստանի Դաշնության կողմից գործադրված ուղղակի ճնշումը՝ արտահայտված առևտրային սահմանափակումների աստիճանական խստացմամբ և ընտրությունների արդյունքների հետ պայմանավորված երկրի ապագա տնտեսական կայունությանը և անվտանգությանը վերաբերող սպառնալիքներով: ԺՀՄԻԳ ԸԴԱ-ն տեղական մակարդակում վարչական ռեսուրսների համակարգային չարաշահում չի արձանագրել, սակայն դիտարկել և ստացել է բազմաթիվ հաղորդումներ, որոնցից մի քանիսը գնահատել է որպես արժանահավատ, իշխող կուսակցության նախընտրական միջոցառումներին մասնակցելու նպատակով ընտրողների նկատմամբ ճնշումների վերաբերյալ: Այս հանգամանքը, ինչպես նաև վերջերս ներդրված կամ նախաձեռնված սոցիալական և տնտեսական միջոցառումները, առավելություն են ստեղծել իշխող կուսակցության համար և խաթարել են քարոզչություն իրականացնելու հավասար հնարավորությունները, ինչը հակասում է ԵԱՀԿ պարտավորություններին: Միևնույն ժամանակ, առկա էին մի քանի պնդումներ, ըստ որոնց՝ որոշ տնտեսական դերակատարներ ճնշում են գործադրել ընտրողների վրա՝ ի շահ ընդդիմադիր կուսակցությունների: Հնչել են բազմաթիվ մեղադրանքներ ընտրկաշառքների և ընտրական այլ խախտումների վերաբերյալ, որոնք իշխանություններն ակտիվորեն քննության են առել: Սակայն այդ քննությունները հիմնական ընդդիմադիր կուսակցությունների կողմնակիցների և թեկնածուների մոտ ձևավորել են օրենքի ընտրովի կիրառման ընկալում և մտահոգություններ առաջացրել քարոզարշավի հետագա ընթացքի վերաբերյալ:

Առցանց քարոզչությունը բավականին լայնորեն տարածված էր, սակայն դրա կարգավորումը սահմանափակվում էր միայն քարոզչական բովանդակության և վճարովի քաղաքական գովազդը նշելու պահանջներով, ինչը սահմանափակում էր թափանցիկության և վերահսկողության հնարավորությունները: Առցանց քարոզարշավն իր բնույթով եղել է առճակատային և պառակտող՝ ուղեկցվելով կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) կողմից միմյանց հասցեին օտարերկրյա միջամտության և օտար պետությունների հետ կապերի վերաբերյալ փոխադարձ մեղադրանքներով: Որոշ թեկնածուներ և երրորդ կողմ հանդիսացող օգատատերերի հաշիվներ իրենց քաղաքական մրցակիցներին վարկաբեկելու նպատակով տարածել են արհեստական բանականությամբ ստեղծված մանիպուլյատիվ բովանդակություն, որը հետագայում լայնորեն տարածվել է առցանց հարթակներում: ԺՀՄԻԳ ԸԴԱ-ն արձանագրել է կեղծ և ոչ իրական հաշիվների կողմից կառավարության և ընտրական գործընթացի վարկաբեկման նպատակով տարածված մանիպուլյատիվ և կեղծ բովանդակություն, թեև դա նախընտրական քննարկումներում նշանակալի դեր չի խաղացել: Սա համահունչ է փաստերի ստուգմամբ զբաղվող մի շարք կազմակերպությունների եզրակացությունների հետ, որոնց համաձայն զգալիորեն աճել են համակարգված ապատեղեկատվական գործողությունները, որոնք, ըստ այդ կազմակերպությունների, գալիս էին արտերկրից: Ընդհանուր առմամբ, իշխանությունները ձեռնարկել են զգալի քայլեր՝ իրենց պատրաստվածության մակարդակը բարձրացնելու, միջգերատեսչական և միջկառավարական համագործակցությունը ամրապնդելու և խնդիրների մասին առցանց հարթակներին տեղեկացնելու ուղղությամբ: Սակայն այդ ջանքերի թափանցիկությունը և արդյունավետությունը սահմանափակվել է բացահայտված

ապատեղեկատվական դեպքերի և դրանց արձագանքման նպատակով ձեռնարկված միջոցների վերաբերյալ հանրամատչելի տեղեկատվության բացակայության պատճառով:

Չնայած ընտրությունների վարչարարությունը իրականացնող մարմինների և խորհրդարանի համար սահմանված գենդերային քվոտաներին, ինչպես նաև ղեկավար մարմիններում գենդերային հավասարակշռություն պահպանող կուսակցությունների համար նախատեսված ֆինանսական խթանների ներդրմանը՝ կանանց մասնակցությունը հանրային և քաղաքական կյանքում շարունակում է մնալ ցածր մակարդակի վրա: Ընտրական ցուցակում առնվազն 30 տոկոս յուրաքանչյուր սեռի ներկայացուցիչ ունենալու պահանջին համապատասխան՝ կանայք կազմել են թեկնածուների 37.3 տոկոսը, սակայն ընտրական ցուցակներից ոչ մեկը կին չի գլխավորել:

Նախընտրական ֆինանսավորման իրավական կարգավորումների օրենսդրական դաշտում կատարված փոփոխություններով ընդլայնվել է նախընտրական ծախսերի սահմանումը, բարձրացվել են նվիրատվությունների և ծախսերի սահմանաչափերը, ինչպես նաև վերաբաշխվել են վերահսկողական լիազորությունները: Այնուամենայնիվ, ընտրական օրենսդրությունում և դրա կիրառման շրջանակներում շարունակում են պահպանվել մի շարք բացեր, որոնք սահմանափակում են կուսակցությունների և նախընտրական ֆինանսավորման թափանցիկությունը և հաշվետվողականությունը: Նախընտրական քարոզարշավին նախորդող ժամանակահատվածում կատարված զգալի ծախսերի վրա չէին տարածվում հաշվետվությունների ներկայացման պահանջները և թույլատրելի ծախսերի սահմանաչափերը: Երրորդ կողմերի կողմից իրականացվող քարոզչությունը կարգավորված չէր, իսկ կանխիկ նվիրատվությունների վերաբերյալ կանոնները չէին ապահովում դրանց հետագծելիությունը: Թեև իրավաբանական անձանց, օտարերկրյա և անանուն աղբյուրներից ստացվող նվիրատվություններն արգելված են, իշխող կուսակցության քաղաքականությունը խթանող բարձրարժեք միջոցառումների կորպորատիվ հովանավորումը մտահոգություններ է առաջացրել բիզնես և քաղաքական շահերի սերտաճման վերաբերյալ: Վերահսկիչ-վերստուգիչ ծառայությունը և Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը ստացել են բանկային քաղվածքները և հրապարակել ընտրություններին մասնակցող սուբյեկտների հաշվետվությունները, սակայն այդ տեղեկատվությունը ներկայացված չէր որոնելի կամ օգտագործողի համար հարմար ձևաչափով, ինչը սահմանափակել է հանրային վերահսկողության հնարավորությունները: Քարոզարշավի ընթացքում Հակակոռուպցիոն կոմիտեն քննություն է իրականացրել կուսակցությունների հետ փոխկապակցված բարեգործական հիմնադրամների և կուսակցությունների նվիրատուների առնչությամբ: Սակայն նշված անձանց ընտրության օրենքով սահմանված չափանիշների բացակայությունը մտահոգություններ է առաջացրել ընտրողական և քաղաքական շարժառիթներով պայմանավորված մոտեցման հնարավորության վերաբերյալ:

Սահմանադրությունը երաշխավորում է արտահայտվելու ազատությունը և լրատվամիջոցների ազատությունը: Լրատվական միջավայրը բազմակարծիք է, սակայն շարունակում է մնալ բևեռացված և սահմանափակված՝ գովազդային շուկայի կրճատման և դրա նեղ կենտրոնացվածության պատճառով, ինչը խաթարում է լրատվամիջոցների ֆինանսական կայունությունը և դրանք խոցելի է դարձնում քաղաքական ազդեցության նկատմամբ, մինչդեռ լրատվամիջոցների սեփականատերերի վերաբերյալ տեղեկատվության թափանցիկության վերաբերյալ իրավական պահանջները շարունակում են մնալ անբավարար: Թեև զրպարտությունը և վիրավորանքը ապաքրեականացված են, նախընտրական ժամանակահատվածում մի շարք լրագրողներ բախվել են զրպարտության վերաբերյալ քաղաքացիական հայցերի, բանավոր հարձակումների, սպառնալիքների և իրենց գործունեությանը խոչընդոտելու դեպքերի, ինչը բացասաբար է ազդել քաղաքական թեմաներով լուսաբանման միջավայրի վրա: ԺՀՄԻԳ ԸԴԱ-ի կողմից իրականացված լրատվամիջոցների մոնիտորինգը ցույց է տվել, որ լրատվամիջոցների մեծ մասն օգտագործվել է ընտրություններին

մասնակցող կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) կողմից՝ փոխադարձ վիրավորանքները և պառակտող քարոզչական հռետորաբանությունը տարածելու նպատակով՝ քիչ ուշադրություն դարձնելով նրանց ծրագրերի բովանդակային վերլուծությանը: Հանրային հեռուստաընկերությունը կատարել է յուրաքանչյուր կուսակցությանը (կուսակցությունների դաշինքին) 90 րոպե անվճար եթերաժամ տրամադրելու վերաբերյալ իր իրավական պարտավորությունը, սակայն միաժամանակ ցուցաբերել է ակնհայտ կողմնակալություն՝ հօգուտ իշխող կուսակցության, ինչը հակասում է նրա իրավական պարտավորություններին և հանրային առաքելությանը: Մի շարք մասնավոր լրատվամիջոցներ բացասական լույսի ներքո են ներկայացրել կառավարությանը և բարենպաստ լուսաբանում են ապահովել ընտրված ընդդիմադիր կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) համար: Այս բոլոր հանգամանքները միասին սահմանափակել են ընտրողների իրազեկված ընտրություն կատարելու հնարավորությունը:

Ընտրական վեճերի լուծման իրավական շրջանակը նախատեսում է արդյունավետ վարչական և դատական վերանայում, սակայն բողոք ներկայացնելու իրավասություն ունեցող անձանց շրջանակը շարունակում է մնալ անհարկի նեղ, ինչը հակասում է միջազգային լավագույն փորձին և ԺՀՄԻԳ-ի և Վենետիկի հանձնաժողովի նախկին առաջարկություններին: ԿԸՀ-ն հրապարակային նիստերում և թափանցիկ ընթացակարգով քննել է հինգ բողոք: Բոլոր բողոքները մերժվել են: Վարչական դատարան է ներկայացվել 57 բողոք, որոնց մեծ մասը դատարանը քննել է դռնբաց նիստերում, օրենքով սահմանված ժամկետներում և թափանցիկ եղանակով:

Օրենսդրությունը նախատեսում է տեղական և միջազգային դիտարկում, ինչպես նաև ընտրություններին մասնակցող կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) ներկայացուցիչների կողմից իրականացվող դիտարկում: ԿԸՀ-ն գրանցել է 13 տեղական դիտորդական կազմակերպություն և 8 միջազգային դիտորդական կազմակերպություն, ինչը նպաստել է թափանցիկությանը: Թեև վերջին օրենսդրական փոփոխությունները, որոնք միտված էին կանխելու քաղաքական կուսակցությունների հետ փոխկապակցված կազմակերպությունների կողմից դիտարկման իրականացումը, ընդհանուր առմամբ դիտորդների կողմից դրական են գնահատվել, այնուամենայնիվ դեռևս առկա են մտահոգություններ առ այն, որ գրանցված որոշ կազմակերպություններ շարունակում են մնալ ընտրություններին մասնակցող կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) հետ փոխկապակցված:

Ընտրության օրը անցել է կազմակերպված և հանգիստ, չնայած իշխանությունների կողմից հաղորդված ընտրական իրավախախտումների վերաբերյալ մի շարք քրեական մեղադրանքներին և քննություններին: Ընտրատեղամասերի բացման և քվեարկության գործընթացները, դիտարկումների ճնշող մեծամասնության շրջանակներում՝ գնահատվել են դրական: ՏԸՀ-ները հիմնականում պահպանել են սահմանված ընթացակարգերը, իսկ ընտրողների նույնականացման սարքերը աշխատել են արդյունավետ կերպով: Կանայք լայնորեն ներկայացված էին ՏԸՀ-ներում, այդ թվում՝ նախագահների պաշտոններում, սակայն մատչելիությունը շարունակում էր մնալ լուրջ խնդիր: Գործընթացն ընդհանուր առմամբ եղել է թափանցիկ և արդյունավետ, թեև որոշ ընտրատեղամասերում արդյունավետության վրա բացասաբար են ազդել գերբեռնվածությունը, ոչ պատշաճ դասավորությունը, առանձին ընթացակարգային սխալները և ընտրական գործընթացի մասնակիցների վստահված անձանց միջամտությունը: Քվեարկության գաղտնիությունը հիմնականում պահպանվել է, իսկ արձանագրված խախտումները մեծամասամբ պայմանավորված են եղել ընտրողների կողմից ընթացակարգերի ոչ բավարար ըմբռնմամբ և գերբեռնվածությամբ: Փակման և ձայների հաշվարկի գործընթացները գնահատվել են դրական, թեև առանձին դեպքերում արձանագրվել են ընթացակարգային անհամապատասխանություններ: Հղում անելով կիբեռանվտանգության հետ կապված մտահոգություններին՝ ԿԸՀ-ն հանձնարարել է ԸԸՀ-ներին սահմանափակել դիտորդների

հասանելիությունը արդյունքների վերաբերյալ տվյալների մուտքագրման գործընթացին 38 ԸԸՀ-ներից 11-ում, ինչը նվազեցրել է գործընթացի թափանցիկությունը:

ՆԱԽՆԱԿԱՆ ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄՆԵՐ

Նախապատմություն և Քաղաքական համատեքստ

Փետրվարի 6-ին ՀՀ Նախագահը նշանակել է խորհրդարանական ընտրություններ՝ 2026 թվականի հունիսի 7-ին: Վարչապետ Նիկոլ Փաշինյանի գլխավորած «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունը 2018 թվականից ի վեր ունի խորհրդարանական մեծամասնություն:[1] Ընտրություններն անցկացվել են խիստ բևեռացված և հուզական առումով լարված միջավայրում, որն առավել սրվել է «խաղաղություն թե՞ պատերազմ» երկընտրանքի շուրջ մրցակցող նարատիվների, ինչպես նաև տարածաշրջանային զարգացումների և Ադրբեջանի հետ խաղաղության գործընթացի հետ կապված հարցերի պատճառով: 2025 թվականի օգոստոսին երկու երկրները նախաստորագրել են «Խաղաղության և միջպետական հարաբերությունների հաստատման մասին» համաձայնագիրը, որը սահմանում է հարաբերությունների կարգավորման շրջանակը:[2] Խաղաղության համաձայնագրի վավերացման և իրականացմանն առնչվող հարցերը շարունակել են էական ազդեցություն ունենալ քաղաքական բանավեճի վրա և մնացել են ընթացող սահմանադրական բարեփոխումների առանցքային թեմաներից մեկը:[3]

Ընդհանուր քաղաքական միջավայրը բնութագրվում էր նաև կառավարության և Հայ Առաքելական Եկեղեցու ղեկավարության միջև առկա լարվածությամբ, [4] ինչպես նաև մի շարք

---

1 Գործող խորհրդարանում «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունն ուներ 107 մանդատից 69-ը: Ընդդիմությունը ներկայացված էր «Հայաստան» դաշինքով՝ 28 մանդատով, և «Պատիվ ունեմ» դաշինքով՝ 6 մանդատով: Մնացած չորս մանդատները զբաղեցնում էին ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչները:

2 Տե՛ս 2025 թվականի օգոստոսի 8-ին նախաստորագրված համաձայնագիրը և դրա հետ կապված Համատեղ հռչակագիրը:

3 Սահմանադրական բարեփոխումների շուրջ քննարկումները սկսվել են 2020 թվականին: 2025 թվականի օգոստոսին համաձայնագրի նախաստորագրումից հետո Ադրբեջանը դրա իրականացումը պայմանավորել է սահմանադրական այն դրույթների վերացմամբ, որոնք, իր գնահատմամբ, պարունակում են տարածքային պահանջների վերաբերյալ հղումներ: Ի պատասխան՝ Հայաստանի վարչապետը և արտաքին գործերի նախարարը նշել են, որ սահմանադրական բարեփոխումը Հայաստանի ներքին գործն է, սակայն միաժամանակ աջակցություն են հայտնել վիճարկվող ձևակերպումները չպարունակող Սահմանադրության ընդունմանը: 2026 թվականի մարտին արդարադատության նախարարը հայտարարել է, որ Սահմանադրության նախագիծը վերջնականացված է և ներառելու է էական փոփոխություններ, այդ թվում՝ հետագա ապակենտրոնացում, ավելի ուժեղ դատական իշխանություն, ինչպես նաև գործադիր իշխանության և վարչապետի նկատմամբ վերահսկողության լրացուցիչ մեխանիզմներ: Վարչապետը հայտարարել է, որ 2027 թվականին նախատեսվում է անցկացնել սահմանադրական հանրաքվե:

4 2020 թվականի նոյեմբերին Ադրբեջանի հետ կնքված հրադադարի համաձայնագրից հետո Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Երկրորդը կոչ արեց վարչապետին վայր դնել վարչապետի լիազորությունները՝ նշելով, որ կառավարությունը, ըստ իրեն, չի կարողացել պաշտպանել ազգային շահերը: Նմանատիպ կոչեր հնչեցին նաև 2023 թվականի սեպտեմբերին ձեռք բերված հրադադարի համաձայնագրից հետո: 2024 թվականի մայիսին տեղի ունեցան հակակառավարական զանգվածային բողոքի ակցիաներ, որոնք առաջնորդվում էին բարձրաստիճան որոշ հոգևորականների կողմից, ինչից հետո բազմաթիվ անձինք բերման ենթարկվեցին: 2025 թվականի հունիսին մի շարք բարձրաստիճան հոգևորականներ և ընդդիմության ներկայացուցիչներ ձերբակալվեցին և ենթարկվեցին քրեական հետապնդման տարբեր հիմքերով, իսկ վարույթները շարունակվեցին մինչև 2026 թվականի հունվարը: 2026 թվականի փետրվարին Կաթողիկոսի նկատմամբ հարուցվեց քրեական հետապնդում և կիրառվեց երկրից դուրս գալու արգելք, որոնք դատարանի կողմից չեղարկվեցին ապրիլին: 2026 թվականի հունվարին վարչապետը, մի շարք հոգևորականների հետ միասին, կոչ արեց Կաթողիկոսին հրաժարական տալ և նախաձեռնեց եկեղեցական բարեփոխումների արշավ: Եկեղեցին, որը աջակցություն էր ստանում մի շարք ընդդիմադիր քաղաքական ուժերից («Ուժեղ Հայաստան», «Հայաստան» դաշինք, «Բարգավաճ Հայաստան» կուսակցություն և «Միասնության թևեր» կուսակցություն), քննադատեց այդ քայլը՝ այն համարելով Սահմանադրությամբ երաշխավորված իր կարգավիճակի խաթարում:

նախկին պաշտոնատար անձանց, եկեղեցական առաջնորդների և հայտնի ընդդիմադիր գործիչների, այդ թվում՝ «Ուժեղ Հայաստան»-ի գործող ղեկավարի նկատմամբ հարուցված քրեական գործերով և ձերբակալություններով:[5] Թեև իշխանությունները պնդում էին, որ այդ գործերը հիմնականում միտված են եղել կոռուպցիայի կանխարգելմանը կամ սահմանադրական կարգի պաշտպանությանը իշխանությունը բռնի զավթելու փորձերից, այնուամենայնիվ ընդդիմությունը և քաղաքացիական հասարակության որոշ կազմակերպություններ դրանք դատապարտել են որպես քաղաքական շարժառիթներով պայմանավորված՝ պնդելով, որ դրանք նպաստել են վախի մթնոլորտի ձևավորմանը: Վերջին տարիներին մի շարք միջազգային և տեղական իրավապաշտպան կազմակերպություններ արձանագրել են խոսքի և հավաքների հիմնարար ազատությունների նկատմամբ հարգանքի նվազում, ինչպես նաև մտահոգություններ են հայտնել մինչդատական կալանքի չափազանց լայն կիրառման, ոստիկանության կողմից թույլ տրված չարաշահումների ոչ բավարար քննության և դատական իշխանության անկախության թուլացման վերաբերյալ:[6]

2023 թվականից ի վեր տեղի ունեցած տարածաշրջանային զարգացումները նույնպես արագացրել են Հայաստանի աշխարհաքաղաքական վերակողմնորոշումը:[7] Մինչ մի շարք քաղաքական կուսակցություններ հանդես են գալիս Ռուսաստանի Դաշնության հետ ռազմավարական գործընկերության պահպանման կամ ամրապնդման օգտին,

---

5 Եկեղեցուն աջակցող հայտարարություններից հետո Սամվել Կարապետյանը, որը հետագայում հիմնադրեց «Ուժեղ Հայաստան»-ը, 2025 թվականի հունիսին ձերբակալվեց՝ իշխանությունը զավթելուն հրապարակային կոչեր անելու մեղադրանքով: Հոկտեմբերին նրա նկատմամբ առաջադրվեցին նաև հարկերից խուսափելու և փողերի լվացման վերաբերյալ լրացուցիչ մեղադրանքներ: 2025 թվականի դեկտեմբերին նրա նկատմամբ որպես խափանման միջոց կիրառվեց տնային կալանք, որը 2026 թվականի ապրիլին երկարաձգվեց ևս երեք ամսով: Ընտրությունների նշանակումից առաջ նախաձեռնված այլ նշանակալի քրեական վարույթների թվում էին գործերը երկու նախկին նախագահների և ներկայիս կուսակցությունների ղեկավարների՝ Ռոբերտ Քոչարյանի և Սերժ Սարգսյանի, ինչպես նաև Երևանի նախկին քաղաքապետի և Գյումրու նախկին քաղաքապետի և քաղաքապետի պաշտոնակատարի նկատմամբ:

6 Տե՛ս 2025 թվականի ՄԱԿ-ի Մարդու իրավունքների կոմիտեի՝ Հայաստանի վերաբերյալ զեկույցը և 2026 թվականի «Human Rights Watch»-ի զեկույցը: 2024 և 2025 թվականներին Հայաստանի մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակը արձանագրել է հավաքների ազատության իրավունքի համակարգային խախտումներ, այդ թվում՝ զանգվածային ձերբակալություններ, ընթացակարգային խախտումներ և ոստիկանության կողմից ուժի անհամաչափ կիրառում: 2026 թվականին «Amnesty International»-ը հաղորդել է հանրային ցույցերի ընթացքում ուժի չափազանց կիրառման և ոստիկանության հաշվետվողականության պակասի մասին, ինչպես նաև մտահոգություն հայտնել 2025 թվականին ընդունված «Ոստիկանության մասին» օրենքի փոփոխությունների վերաբերյալ, որոնք ոստիկանությանը թույլ են տվել կիրառել հսկողության լայն շրջանակի միջոցներ, այդ թվում՝ հանրային վայրերում, տրանսպորտային հանգույցներում և հանրային շենքերում տեղադրված տեսախցիկներից ուղիղ հեռարձակումների օգտագործումը: Կազմակերպության գնահատմամբ՝ այդ փոփոխությունները «զսպող ազդեցություն են ունենում և հանգեցնում են անձնական կյանքի գաղտնիության, խաղաղ հավաքների ազատության և խտրականությունից զերծ լինելու իրավունքների խախտումների»: 2025 թվականին Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպությունը (ՏՀԶԿ) նշել է, որ «Նախագահը և խորհրդարանը շարունակել են ազդեցություն ունենալ դատավորների նշանակման և առաջխաղացման գործընթացների վրա: [...] Առկա է հրատապ անհրաժեշտություն հստակ սահմանելու դատավորների կարգապահական պատասխանատվության իրավական հիմքերը, հատկապես այն հիմքերը, որոնք առնչվում են դատավորների արտահայտվելու ազատությանը, ինչպես նաև ապահովելու, որ կիրառվող պատժամիջոցները լինեն համաչափ, իսկ դատավորների պաշտոնանկությունը գործնականում կիրառվի որպես վերջին միջոց»:

7 Հայաստանը 2024 թվականի փետրվարին դադարեցրել է իր մասնակցությունը Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպությանը, որը գլխավորում է Ռուսաստանի Դաշնությունը, թեև պաշտոնապես դուրս չի եկել կազմակերպությունից: Եվրոպական միությունը 2023 թվականի հունվարին մեկնարկել է քաղաքացիական առաքելություն՝ սահմանամերձ շրջաններում կայունությանը նպաստելու նպատակով: Խորհրդարանը 2025 թվականի մարտին ընդունել է ԵՄ ինտեգրման մասին ակտը, իսկ 2025 թվականի դեկտեմբերին՝ ԵՄ–Հայաստան գործընկերության օրակարգը: 2026 թվականի ապրիլին Հայաստանում ստեղծվել է ԵՄ գործընկերության առաքելություն՝ դիմակայունության և ճգնաժամային կառավարման կարողությունների ամրապնդման նպատակով: 2026 թվականի մայիսին, Եվրոպական քաղաքական համայնքի հանդիպումից հետո, Երևանում տեղի է ունեցել Հայաստան–ԵՄ առաջին գագաթնաժողովը:

կառավարությունը և որոշ կուսակցություններ պաշտպանում են արտաքին քաղաքականության վերահավասարակշռումը՝ հիմնված Եվրոպական միության (ԵՄ) և Միացյալ Նահանգների (ԱՄՆ) հետ առավել սերտ հարաբերությունների հաստատման, ինչպես նաև հարևան երկրների հետ հարաբերությունների կարգավորման վրա: Այս վերակողմնորոշումը հանգեցրեց արտաքին միջամտության՝ Ռուսաստանի Դաշնության պաշտոնյաների հրապարակային հայտարարությունների և միջոցառումների միջոցով, որոնք սպառնում էին ԵՄ-ի հետ ավելի սերտ կապերի օգտին ընտրությունների արդյունքի դեպքում տնտեսական և անվտանգության հետևանքներով, ինչպես նաև առևտրային սահմանափակումների ընդունմամբ, որոնք ազդում էին հայկական արտահանման վրա:[8] Վերջին տարիներին իշխանությունները հաղորդում էին հիբրիդային սպառնալիքների և Հայաստանի դեմ ուղղված, արտաքին ազդեցության համակարգված գործողությունների աճի մասին, ինչպես նաև մտահոգություն են հայտնել, որ ընտրությունների մոտենալուն զուգընթաց նման դեպքերը կդառնան ավելի տարածված:[9]

Չնայած գենդերային քվոտաներին և կուսակցությունների ղեկավար մարմիններում գենդերային հավասարակշռությունը պահպանելու համար վերջերս ներդրված ֆինանսական խթանների արդյունքում արձանագրված որոշ առաջընթացին՝ կանանց մասնակցությունը հանրային և քաղաքական կյանքում շարունակում է մնալ ցածր մակարդակի վրա: [10] Կառավարության 12 նախարարներից 4-ը և գործող խորհրդարանի պատգամավորների 39 տոկոսը կանայք են: Մարզպետների թվում կին չկա: Ընտրություններին մասնակցող քաղաքական ուժերից ոչ մեկը չի գլխավորել կին:

---

8 Ռուսաստանի Դաշնության մի շարք բարձրաստիճան պաշտոնատար անձինք, այդ թվում՝ ՌԴ նախագահը, արտաքին գործերի նախարարը և փոխվարչապետը, կոչ են արել Հայաստանի իշխանություններին «կատարել ընտրություն Եվրոպական միության և Եվրասիական տնտեսական միության (ԵԱՏՄ) միջև» և, ընդգծելով երկու երկրների միջև առկա կառուցվածքային ինտեգրումը, նախազգուշացրել են հնարավոր տարանջատման հետևանքների մասին: Բացի այդ, Ռուսաստանի Դաշնության նախագահը զուգահեռներ է անցկացրել Ուկրաինայում տեղի ունեցած զարգացումների հետ: Ռուսաստանի իշխանությունները մի շարք սահմանափակումներ են կիրառել Հայաստանի արտահանման նկատմամբ, այդ թվում՝ ծաղիկների, հանքային ջրի և ալկոհոլային խմիչքների մասով, ինչպես նաև սննդամթերքի նկատմամբ իրականացրել են ստուգումներ: Ավելի վաղ, վարչապետ Փաշինյանի՝ ապրիլին Մոսկվա կատարած այցի ընթացքում, Ռուսաստանի Դաշնության նախագահը խոսել էր երկու երկրների միջև գոյություն ունեցող «հատուկ հարաբերությունների» մասին և մտահոգություն հայտնել, որ ռուսամետ դիրքորոշումներ ունեցող որոշ հայ քաղաքական գործիչներ գտնվում են կալանքի տակ: Մայիսի 27-ին Ռուսաստանի Դաշնության իշխանությունները հայտարարեցին բնական գազի, նավթամթերքի և ադամանդների մատակարարման պայմանները վերանայելու մտադրության մասին, իսկ մայիսի 28-ին հայտարարեցին լրացուցիչ գյուղատնտեսական ապրանքների նկատմամբ «ժամանակավոր սահմանափակումներ» կիրառելու մասին: Հայաստանի արտաքին գործերի նախարարը արձագանքեց այդ հայտարարություններից մի մասին՝ նշելով, որ երկիրը «շահագրգռված է Ռուսաստանի հետ բնականոն գործընկերության պահպանմամբ և զարգացմամբ»: Մայիսի 30-ին Ռուսաստանի Դաշնությունը խորհրդակցությունների նպատակով հետ կանչեց Երևանում իր դեսպանին՝ «Հայաստանի ղեկավարության կողմից Եվրոպական միության հետ հարաբերությունների առավել սերտացմանն ուղղված քայլերի կապակցությամբ»:

9 Տե՛ս Հայաստանի արտաքին հետախուզության ծառայության 2026 թվականի «Արտաքին անվտանգության ռիսկերի մասին» զեկույցը և CyberHUB–AM-ի «Հայաստանի կիբեռանվտանգության սպառնալիքների միջավայր» զեկույցը:

10 Քաղաքական կուսակցություններին տրամադրվող պետական ֆինանսավորման 80 տոկոսը բաշխվում է՝ ելնելով ստացած ձայների քանակից: Լրացուցիչ 20 տոկոսը բաշխվում է հետևյալ կերպ. կուսակցությունը ստանում է դրա կեսը, եթե կուսակցության ղեկավար մարմնում կանանց մասնաբաժինը գերազանցում է 40 տոկոսը, մեկ քառորդը՝ եթե կանայք կազմում են 20-40 տոկոսը, իսկ եթե կանանց մասնաբաժինը 20 տոկոսից պակաս է, կուսակցությունը չի ստանում ֆինանսավորման այդ մասը: Բացի այդ, կուսակցությունը ստանում է լրացուցիչ ֆինանսավորման կեսը, եթե մասնաճյուղեր ունի Հայաստանի ամբողջ տարածքում, և մեկ քառորդը՝ եթե մասնաճյուղեր ունի Հայաստանի մարզերի առնվազն կեսում:

Իրավական դաշտը և Ընտրական համակարգը

Ընտրությունները տեղի են ունեցել վերանայված իրավական շրջանակի համաձայն, որը ամուր հիմք է ստեղծում ժողովրդավարական ընտրություններ անցկացնելու համար:[11] Վերջին ընտրություններից ի վեր ընտրություններին վերաբերող իրավական դաշտը ենթարկվել է էական փոփոխությունների, որոնք արտացոլվում են ԺՀՄԻԳ-ի և Վենետիկի Հանձնաժողովի կողմից նախկինում ներկայացրած մի շարք առաջարկություններում, որոնք վերաբերվում էին վարչական ռեսուրսների չարաշահմանը, ընտրողների վրա ճնշման և ձայների գնման համար նախատեսվող պատասխանատվության միջոցներին, ընտրությունների հետ կապված քրեական հանցագործություններին և հաշմանդամություն ունեցող ընտրողների համար ընտրությունների հասանելիությանը: 2021 թվականի մայիսին ընդունված փոփոխությունների արդյունքում վերանայվել են նախընտրական ֆինանսավորման, ընտրություններին մասնակցող կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) լրատվամիջոցներով լուսաբանման, ընտրողների և թեկնածուների գրանցման, քվեաթերթիկների վավերականության, ինչպես նաև գենդերային քվոտայի և դրա հետ կապված մանդատների բաշխման կանոնները: 2022 թվականի հուլիսին ընդունված փոփոխությունները վերաբերվում էին քվեարկության և ձայների հաշվարկի տեսաձայնագրմանը, ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների անդամներին ներկայացվող պահանջների խստացմանը, ինչպես նաև քաղաքական կուսակցությունների դաշինքների անվանումներին: 2024 թվականի դեկտեմբերի փոփոխություններ վերաբերվում էին թեկնածուների գրանցումը ուժը կորցրած ճանաչելուն, թույլատրելի քարոզչական նյութերին, ընտատեղամասերի մատչելիության ապահովման միջոցառումներին, վերահաշվարկի և նախընտրական ֆինանսավորման վերահսկողության հարցերին: Այս փոփոխություններն ընդունվել են բաց, ներառական և մասնակցային գործընթացների միջոցով: Սակայն որոշ դեպքերում փոփոխությունների հաճախականությունը և բարդությունը հանգեցրել են օրենսդրական ձևակերպումների անհամապատասխանություններին:[12]

2026 թվականի հունվարին և ապրիլին արագացված ընթացակարգով, առանց պատշաճ խորհրդակցությունների կամ քաղաքական ուժերի լայն աջակցության ընդունվել է ևս երկու փոփոխությունների փաթեթ:[13] Բացի այդ, ապրիլյան փոփոխություններն ընդունվել են ընտրությունների նշանակումից հետո, ինչը չի համապատասխանում լավագույն միջազգային փորձին և արդյունքում որոշ դաշինքներ ունեին բավականին քիչ ժամանակ իրենց գրանցման

---

[11] Ազգային ժողովի ընտրությունները կարգավորվում են 1995 թվականի Սահմանադրությամբ, 2016 թվականի ՀՀ Ընտրական օրենսգրքով, 2016 թվականի «Կուսակցությունների մասին» Սահմանադրական օրենքով և այլ օրենսդրական ակտերով, այդ թվում՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի (ԿԸՀ) որոշումներով:

[12] 2024 թվականի փոփոխություններով փոփոխվել, վերաձևակերպվել կամ ուժը կորցրած են ճանաչվել 2021 և 2022 թվականներին ներդրված բազմաթիվ դրույթներ՝ 2021 թվականի ընտրությունների ընթացքում ի հայտ եկած բացերը և ԺՀՄԻԳ-ի և Վենետիկի հանձնաժողովի համապատասխան հանձնարարականները հաստեգրելու նպատակով: Տե՛ս նաև Ընտրական օրենսգրքի և հարակից օրենսդրության փոփոխությունների նախագծերի վերաբերյալ ԺՀՄԻԳ-ի և Վենետիկի հանձնաժողովի 2021 թվականի համատեղ հրատապ կարծիքը և 2023 թվականի համատեղ կարծիքը:

[13] Հունվարին ընդունված փոփոխություններով քաղաքացիական դիտորդների համար սահմանվել են հավատարմագրման լրացուցիչ պահանջներ, ինչպես նաև ԿԸՀ-ին վերապահվել է որոշակի խախտումների դեպքում հավատարմագրումը հետ կանչելու լիազորություն: Ապրիլին ընդունված փոփոխություններով հստակեցվել են քվեաթերթիկների վավերության կանոնները և վերականգնվել է դաշինքների անվանումներում անձնական անունների օգտագործման արգելքը, որը սահմանվել էր 2022 թվականին, սակայն 2024 թվականին վերացվել էր օրենսդրական տեխնիկական սխալի հետևանքով, երբ նախատեսված մեկ նախադասության փոխարեն ջնջվել էր ամբողջ պարբերությունը:

դիմումները նոր ընդունված ընթացակարգերի պահանջներին համապատասխանեցնելու համար:[14]

Ընդհանուր առմամբ, իրավական դաշտն ապահովում է ժողովրդավարական ընտրությունների անցկացման համար համարժեք հիմքեր: Այնուամենայնիվ, չնայած վերջին փոփոխություններով ներդրված մի շարք բարելավումներին, օրենսդրությունում դեռևս պահպանվում են որոշ բացեր և երկիմաստություններ:[15] ԺՀՄԻԳ-ի և Վենետիկի հանձնաժողովի կողմից նախկինում ներկայացրած մի շարք առաջարկություններ շարունակում են մնալ չիրականացված, այդ թվում այն առաջարկությունները, որոնք վերաբերվում էին հոգեկան առողջության հիմքով ընտրական իրավունքի սահմանափակումներին, ընտրողների անձնական տվյալների պաշտպանությանը, երկքաղաքացիություն ունեցող անձանց թեկնածու առաջադրվելու իրավունքին, նախընտրական ֆինանսավորման և լրատվամիջոցների սեփականատերերի վերաբերյալ տեղեկատվության թափանցիկությանը, ատելություն կամ թշնամանք հրահրող հռետորաբանության դեմ արդյունավետ միջոցների կիրառմանը, վերահաշվարկների համար նախատեսված ժամկետի երկարաձգմանը, արդյունավետ իրավական պաշտպանության միջոցների դիմելու իրավունքին, ինչպես նաև դիտորդական կազմակերպությունների հավատարմագրման սահմանափակումներին:

Ընտրողները հանրապետության ողջ տարածքն ընդգրկող մեկ բազմամանդատ ընտրատարածքում փակ ցուցակներով համամասնական ընտրակարգով կընտրեն առնվազն 101 պատգամավոր և ազգային փոքրամասնությունները ներկայացնող 4 պատգամավոր:[16] 2021 թվականի մայիսին ընդունված փոփոխություններով մանդատների բաշխմանը մասնակցելու համար կուսակցությունների համար սահմանված ընտրական շեմը իջեցվել է մինչև 4 տոկոս, մինչդեռ մինչև երեք կուսակցությունից բաղկացած դաշինքների համար այն բարձրացվել է մինչև 8 տոկոս, իսկ չորս և ավելի կուսակցություններից բաղկացած դաշինքների համար՝ մինչև 10 տոկոս: Այս փոփոխությունները չեն համապատասխանել դաշինքների համար սահմանված շեմը կուսակցությունների շեմին համապատասխանեցնելու վերաբերյալ ԺՀՄԻԳ-ի և Վենետիկի

---

14 «Ուժեղ Հայաստան»-ը ի սկզբանե իր գրանցման դիմումը ներկայացրել էր «Ուժեղ Հայաստան՝ Սամվել Կարապետյանի հետ» անվանմամբ, սակայն պարտավորվել էր փոփոխել իր դիմումը: Տե՛ս նաև Վենետիկի հանձնաժողովի «Ընտրական իրավունքի կայունության վերաբերյալ մեկնաբանական հռչակագրի» 2024 թվականի վերանայված տարբերակի II.B.6.A բաժինը, որի համաձայն՝ «ընտրությունների նշանակումից հետո ընտրական օրենսդրությունում չպետք է կատարվեն որևէ փոփոխություններ, բացառությամբ այն դեպքերի, երբ դրանք խիստ անհրաժեշտ են ազգային սահմանադրական դատարանների կամ համարժեք իրավասություն ունեցող գերագույն դատարանների, կամ միջազգային դատարանների պարտադիր ուժ ունեցող որոշումներին համապատասխանելու համար»:

15 Օրենքը բավարար չափով չի կարգավորում երրորդ կողմերի կողմից իրականացվող քարոզչությունը և առցանց քարոզչությունը, չի սահմանում ԿԸՀ-ի կողմից քարոզարշավի հետ կապված խախտումների համար կիրառվող հստակ և համաչափ պատժամիջոցներ, ինչպես նաև չի նախատեսում այն ընթացակարգերը, որոնցով ԿԸՀ-ն պետք է քննի ՀՀ գլխավոր դատախազի՝ թեկնածուների նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու համաձայնություն ստանալու վերաբերյալ միջնորդությունները: Թեև օրենքն արգելում է կուսակցությունների և դաշինքների անվանումների որոշակի տեսակներ, այն հստակ չի նախատեսում, որ այդ արգելքի խախտումը կարող է հանդիսանալ գրանցումը մերժելու հիմք: Բացի այդ, թեկնածուների ցուցակների գրանցումն ուժը կորցրած ճանաչելու կամ ՏԸՀ-ների և ԸԸՀ-ների անդամների լիազորությունները դադարեցնելու հիմք հանդիսացող խախտումների վերաբերյալ դրույթները շարունակում են մնալ անորոշ:

16 Օրենքը նախատեսում է խորհրդարանում մինչև չորս մանդատ՝ առավել մեծ թվով մշտական բնակչություն ունեցող առաջին չորս ազգային փոքրամասնություններից յուրաքանչյուրի համար (եզդիներ, ռուսներ, ասորիներ և քրդեր)՝ ընտրական շեմը հաղթահարած կուսակցությունների ստացած ձայներին համամասնորեն:

հանձնաժողովի առաջարկություններին:[17] Համաձայն ՀՀ Սահմանադրության, կառավարություն կազմելու համար անհրաժեշտ է կայուն խորհրդարանական մեծամասնություն՝ մանդատների ընդհանուր թվի 52 տոկոսի չափով: Եթե կուսակցությունը (կուսակցությունների դաշինքը) ստանում է մանդատների բացարձակ մեծամասնություն, սակայն չի հասնում նշված շեմին, ապա այդ կուսակցությունը ստանում է այնքան նվազագույն թվով լրացուցիչ մանդատներ, որոնց արդյունքով այդ կուսակցության մանդատների քանակը տոկոսային արտահայտությամբ կլինի ոչ պակաս, քան սահմանված շեմը: Եթե որևէ քաղաքական կոալիցիա չի ձևավորվում, ապա քվեարկության օրվանից 35 օր հետո անցկացվում է Ազգային ժողովի ընտրության երկրորդ փուլ՝ երկու առավելագույն ձայներ ստացած կուսակցությունների միջև, և հաղթողին տրվում են լրացուցիչ մանդատները:

Ընտրությունների Վարչարարությունը

Ընտրությունների վարչարարությունն իրականացվում է եռաստիճան համակարգով, որը կազմված է ԿԸՀ-ից, 38 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովներից (ԸԸՀ) և 2005 տեղամասային ընտրական հանձնաժողովներից (ՏԸՀ): [18] ԿԸՀ-ն և ԸԸՀ-ների մեծ մասը պահպանել են օրենքով սահմանված գենդերային քվոտայի պահանջները, թեև կանայք շարունակում էին լինել թերներկայացված ղեկավար պաշտոններում: [19] Ընտրությունների վարչարարությունը իրականացնող մարմինը տեխնիկական նախապատրաստական աշխատանքները կատարել է պրոֆեսիոնալ և արդյունավետ կերպով և վայելել է շահագրգիռ կողմերի մեծ մասի, այդ թվում՝ քաղաքական կուսակցությունների, վստահությունը իր տեխնիկական կարողությունների նկատմամբ: Միևնույն ժամանակ, ընդդիմության և քաղաքացիական հասարակության որոշ ներկայացուցիչներ մտահոգություններ են հայտնել ԿԸՀ-ի և ԸԸՀ-ների անկախության վերաբերյալ՝ վկայակոչելով դրանց անդամների նշանակման կարգը:[20]

ԿԸՀ-ն, որը պատասխանատու էր ողջ ընտրական գործընթացի վերահսկողության համար, կանոնավոր կերպով հրավիրել է նիստեր, որոնք որպես կանոն բաց են եղել դիտորդների, վստահված անձանց, թեկնածուների և լրատվամիջոցների համար, որոնք նաև ուղիղ եթերով հեռարձակվել և տեսաձայնագրվել են, ինչը նպաստել է թափանցիկությանը: Սակայն նիստերի օրակարգերը հաճախ հրապարակվում էին նիստերի մեկնարկից անմիջապես առաջ, ինչը

---

17 Տե՛ս Ընտրական օրենսգրքի վերաբերյալ 2021 թվականի համատեղ կարծիքի 45-51-րդ պարբերությունները, որոնցում ԺՀՄԻԳ-ը և Վենետիկի հանձնաժողովը խորհուրդ են տվել առանց բավարար հիմնավորման չբարձրացնել դաշինքների համար սահմանված ընտրական շեմերը: Տե՛ս նաև Ընտրական օրենսգրքի նախագծի վերաբերյալ ԺՀՄԻԳ-ի և Վենետիկի հանձնաժողովի 2016 թվականի ապրիլի համատեղ կարծիքը, որտեղ նշվում է, որ «դաշինքները կարող են նպաստել ավելի մեծ համագործակցության և կայուն կառավարման [...] ուստի դաշինքների համար սահմանված շեմը կարող է նույնը լինել, ինչ քաղաքական կուսակցությունների համար»:

18 ԿԸՀ-ն բաղկացած է յոթ անդամից, որոնք ընտրվում են Ազգային ժողովի կողմից՝ պատգամավորների ընդհանուր թվի առնվազն երեք հինգերորդի ձայներով, վեց տարի ժամկետով՝ մեկ անգամ վերընտրվելու իրավունքով: ԸԸՀ-երը մշտական գործող մարմիններ են, որոնք կազմված են յոթ անդամից և նշանակվում են ԿԸՀ-ի կողմից վեց տարի ժամկետով:

19 Օրենքը պահանջում է, որ ԿԸՀ-ում և ԸԸՀ-ներում յուրաքանչյուր սեռը ներկայացված լինի առնվազն երեք անդամով: ԿԸՀ-ի անդամներից չորսը և ԸԸՀ-ների անդամների 46 տոկոսը կանայք են: Թեև ԸԸՀ-ների քարտուղարների մոտ 87 տոկոսը կանայք են, նրանք զբաղեցնում էին նախագահների և նախագահի տեղակալների պաշտոնների միայն 16 տոկոսը: Երեք ԸԸՀ-ներ, որոնք կազմավորվել էին մինչև ընտրական վարչարարություն իրականացնող մարմինների համար ավելի խիստ գենդերային քվոտաների պահանջի ներդրումը, ունեին երկուական կին անդամ: ՏԸՀ-ների անդամների վերաբերյալ սեռային կտրվածքով տվյալները մինչև ընտրության օրը հասանելի չէին:

20 ԿԸՀ-ի անդամները նշանակվել էին խորհրդարանական մեծամասնության կողմից: ԺՀՄԻԳ ԸԴԱ-ի որոշ զրուցակիցներ մտահոգություն են հայտնել «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության հետ ԿԸՀ նախագահի ունեցած նախկին կապերի վերաբերյալ: ԸԸՀ-ների բազմաթիվ անդամներ հանրային ծառայողներ են:

հանգեցնում էր սահմանափակ բովանդակային քննարկումների և նվազեցնում որոշումների կայացման գործընթացի թափանցիկությունը և հաշվետվողականությունը:

ԸԸՀ-երը վերահսկել են ՏԸՀ-երի կազմավորումն ու գործունեությունը, տեղական ինքնակառավարման մարմինների հետ համագործակցությամբ կազմավորել են ընտրական տեղամասերը և իրականացրել ստորադաս ընտրական հանձնաժողովների անդամների վերապատրաստումը: Վերջին օրենսդրական փոփոխություններին համաձայն՝ ՏԸՀ-երի բոլոր անդամներն անցել են ատեստավորում և վերապատրաստում: Ընտրական ժամանակահատվածում ԸԸՀ-ների նիստերը հեռարձակվում էին առցանց, իսկ նիստերի արդյունքում կայացրած որոշումները՝ հրապարակվում ԿԸՀ-ի կայքում: ՏԸՀ-երը, որոնք պատասխանատու են ընտրության օրվա գործընթացների կազմակերպման համար, բաղկացած են ութ անդամից. երկուական անդամ նշանակվում է խորհրդարանական երեք խմբակցություններից յուրաքանչյուրի կողմից, ևս երկուսը՝ համապատասխան ԸԸՀ-երի կողմից:[21] Բոլոր ՏԸՀ-երը ձևավորվել են օրենքով սահմանված ժամկետներում, այն է՝ մինչև մայիսի 13-ը: Գրանցվել են քիչ թվով ուշացումներ, որոնք պայմանավորված էին խորհրդարանական խմբակցությունների կողմից առաջադրած անդամների ոչ բավարար թվով:

ԿԸՀ-ի կազմում Մասնագիտական վերապատրաստումների և ԸԸՀ-ների հետ կապերի բաժինների ստեղծումը բարելավել է ստորադաս մակարդակի հանձնաժողովների պատրաստվածությունը և ներքին հաղորդակցությունը, ինչը բավականին դրական առաջընթաց է: Այս ջանքերի շրջանակում ԿԸՀ-ն ՏԸՀ-երի կարողություններն ամրապնդելու նպատակով ԸՀ անդամների համար մեկնարկել է վերապատրաստողների վերապատրաստման (ToT) ծրագիր: ՏԸՀ-երի վերապատրաստումը ներառել է քվեարկության օրվա մասնագիտական ընթացակարգեր: Վերապատրաստման այն դասընթացները, որոնք դիտարկվել են ԺՀՄԻԳ ԸԴԱ-ի երկարաժամկետ դիտորդների կողմից ընդհանուր առմամբ, գնահատվել են որպես համապարփակ և ինտերակտիվ: Հունիսի 3-ին անցկացված վերապատրաստումների ավարտից հետո նշանակված ՏԸՀ անդամների փոխարինողները ստացել են գրավոր ուսումնական նյութեր և համապատասխան հրահանգավորումներ:[22]

ԿԸՀ-ն իրականացրել է ընտրողների իրազեկման մանրամասն աշխատանքներ՝ ընտրողների գրանցման, ընտրական համակարգի և քվեարկության ընթացակարգերի վերաբերյալ՝ հիմնականում լրատվամիջոցներում ելույթների, առցանց նյութերի և բրոշյուրների միջոցով: Այդ նյութերից մի մասը տրամադրվել է մատչելի ձևաչափերով, օրինակ՝ ժեստերի լեզվի թարգմանությամբ, աուդիոնյութերի, հեշտ ընթեռնելի ձևաչափի, ենթագրերի և Բրայլյան կաղապարի կիրառմամբ: Թեև ընդհանուր առմամբ իրականացված միջոցառումները լայնածավալ էին, դրանց տեսանելիությունը տարբեր մարզերում տարբեր մակարդակի էր: Որոշ շրջաններում ընտրողների իրազեկման լրացուցիչ միջոցառումներ իրականացվել են նաև

---

21 ՏԸՀ-ների նախագահների և քարտուղարների պաշտոնները ԿԸՀ-ի կողմից բաշխվել են խորհրդարանական խմբակցությունների միջև՝ խորհրդարանում յուրաքանչյուր կուսակցության զբաղեցրած մանդատների թվի, առկա հաստիքների և ընտրական տեղամասերի թվի հիման վրա կիրառվող բանաձևի համաձայն: Այն դեպքերում, երբ քաղաքական կուսակցությունները չեն ներկայացրել թեկնածություններ, ԸԸՀ-երը նշանակել են անդամների՝ հավաստագրված դիմորդների ցուցակից:

22 ԺՀՄԻԳ ԸԴԱ-ի երկարաժամկետ դիտորդները մասնակցել են շուրջ 40 վերապատրաստման դասընթացների: Վերապատրաստումների մեթոդաբանությունը և մոտեցումները ստանդարտացված էին, թեև դիտորդները արձանագրել են որոշ տարբերություններ մասնակիցների ներգրավվածության և փոխգործակցության մակարդակի առումով:

քաղաքացիական հասարակության կազմակերպությունների կողմից:[23] ԿԸՀ-ն նաև քայլեր է ձեռնարկել ընտրությունների հասանելիությունը բարելավելու ուղղությամբ: Այսպիսով, ընտրողները կարող էին դիմել ժամանակավորապես գրանցվելու առավել հասանելի և մատչելի ընտրական տեղամասերում: Այնուամենայնիվ, բազմաթիվ ընտրատեղամասեր շարունակում էին մնալ ոչ հասանելի, ինչը, այլընտրանքային քվեարկության հասանելի մեթոդների բացակայության զուգորդմամբ, շարունակում էր խոչընդոտել հաշմանդամություն ունեցող անձանց ինքնուրույն մասնակցությունը ընտրություններին (*տե՛ս նաև «Ընտրությունների օր» բաժինը)*:[24]

Ընտրողների իրավունքները և գրանցումը

Ընտրությունների օրը 18 տարին լրացած բոլոր քաղաքացիներն ունեն ընտրելու իրավունք, բացառությամբ ծանր հանցագործությունների համար ազատազրկված անձանց: Հակառակ միջազգային չափանիշներին և հաշվի չառնելով ԺՀՄԻԳ-ի և Վենետիկի հանձնաժողովի կողմից նախկինում ներկայացված առաջարկությունները՝ դատարանի վճռով անգործունակ ճանաչված քաղաքացիները զրկված են ընտրելու իրավունքից:[25] Ընտրողների գրանցումն իրականացվում է պասիվ և շարունակական եղանակով: Ընտրողների ռեգիստրը վարում է Միգրացիայի և քաղաքացիության ծառայությունը՝ բնակչության պետական ռեգիստրի տվյալների հիման վրա, և այն ներառում է մշտական բնակության իրավունք ունեցող այն քաղաքացիներին, որոնք քվեարկության օրվան նախորդող վեց ամսվա ընթացքում ունեցել են անձը հաստատող վավեր փաստաթուղթ:

Ընտրություններից առաջ ընտրատեղամասերի ընտրողների ցուցակները փակցվել են ընտրական տեղամասերում և հրապարակվել առցանց՝ ներբեռնելի և որոնելի ձևաչափով: Ընտրողները ունեին բավարար հնարավորություններ՝ ինչպես առցանց, այնպես էլ Միգրացիայի և քաղաքացիության ծառայության գրասենյակներում անձամբ, դիմելու իրենց տվյալների ճշգրտման կամ ընրողների ցուցակներում ընդգրկվելու համար: Մայիսի 26-ի դրությամբ ըստ գտնվելու վայրի ընտրական տեղամասի ընտրողների ցուցակում ընդգրկվելու համար դիմել էր 22,734 ընտրող:[26] Ընտրելու իրավունք ունեցող ընտրողները կարող էին ընդգրկվել ընտրողների լրացուցիչ ցուցակներում, այդ թվում՝ ընտրության օրը, պայմանով, որ պետք է ապացուցեին իրենց ընտրելու իրավունքը: Օրենքի համաձայն՝ էլեկտրոնային քվեարկությունը հասանելի էր

---

23 Օրինակ՝ «Մենք» և «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» կազմակերպությունները իրականացրել են իրազեկման միջոցառումներ առաջին անգամ քվեարկող ընտրողների համար, «Առաքելություն Հայաստան» ՀԿ-ն, «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների օրակարգ» ՀԿ-ն և «Լուսաստղ» ՀԿ-ն տեղեկատվություն են տրամադրել հաշմանդամություն ունեցող ընտրողներին, «Ռեստարտ» ՀԿ-ն կազմակերպել է երիտասարդական ճամբարներ և երիտասարդ ընտրողներին ուղղված սոցիալական մեդիայի արշավ, «Կանանց իրավունքների կենտրոն»-ը կենտրոնացել է կին ընտրողների կարողությունների հզորացման վրա, իսկ «PINK Armenia»-ն՝ ԼԳԲՏԻ ընտրողների քաղաքական ներգրավվածության խթանման վրա:

24 ԿԸՀ-ի տվյալներով՝ ընտրական տեղամասերի 31 տոկոսը հասանելի էր տեղաշարժման դժվարություն և հաշմանդամություն ունեցող անձանց համար:

25 Տե՛ս Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիայի 12-րդ և 29-րդ հոդվածները: Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիայի վերաբերյալ 2014 թվականի թիվ 1 Ընդհանուր մեկնաբանության 48-րդ պարբերությունում նշվում է, որ «անձի՝ որոշումներ կայացնելու կարողությունը չի կարող սահմանափակել հաշմանդամություն ունեցող անձանց քաղաքական իրավունքների իրացումը, ներառյալ ընտրելու իրավունքը [և] ընտրություններին որպես թեկնածու առաջադրվելու իրավունքը»:

26 Հատուկ ընտրական ցուցակներ են կազմվել քրեակատարողական հիմնարկներում, ձեռբակալված անձանց պահման վայրերում, զինվորական և բժշկական հաստատություններում գտնվող ընտրողների համար: Ծրջիկ արկղով քվեարկություն է կազմակերպվել բուժհաստատություններում և ձեռբակալված անձանց պահման վայրերում:

միայն արտերկրում գտնվող դիվանագիտական և զինվորական անձնակազմին, ինչպես նաև նրանց ընտանիքների անդամներին, այն է՝ ընդհանուր 537 անձի:[27]

ՄԸԴԱ -ի զրուցակիցների մեծ մասն վստահություն էին հայտնել ընտրողների ցուցակների ճշգրտության նկատմամբ: Գրանցված ընտրողների վերջնական թիվը կազմել է 2,503,976 ընտրող: Ներքին գործերի նախարարությունը (ՆԳՆ) ԺՀՄԻԳ ԸԴԱ-ին տեղեկացրել է, որ ընտրությունների օրվանից առաջ ընտրացուցակներում ընդգրկվել են շուրջ 20,101 վերջերս Հայաստանի քաղաքացիություն ստացած հայ փախստականներ: Սակայն ընտրությունների օրվա դրությամբ դեռևս 6,000 դիմում շարունակում էր գտնվել քննարկման փուլում, ինչի հետևանքով դիմորդները զրկվել էին քվեարկելու հնարավորությունից: ԺՀՄԻԳ ԸԴԱ-ի որոշ զրուցակիցներ դիմումների քննության դանդաղ ընթացքը վերագրել են քաղաքացիության տրամադրման՝ բյուրոկրատական ձգձգումներով պայմանավորված գործընթացի:[28]

Ընտրության օրվանից հետո ստորագրված ընտրացուցակները, բացառությամբ զինվորական հաստատությունների, ձերբակալված անձանց պահելու վայրերի և քրեակատարողական հիմնարկների ընտրացուցակների, կիրապարակվեն առցանց: Չնայած այն հանգամանքին, որ այս գործելակերպի նպատակն է բարձրացնել թափանցիկությունը և կանխել ընտրակեղծիքները, ԺՀՄԻԳ-ի և Վենետիկի հանձնաժողովի՝ նախկինում ներկայացված առաջարկություններում խորհուրդ էր տրվել հրաժարվել այս մոտեցումից՝ ընտրողների անձնական տվյալների պաշտպանությունն ապահովելու և քվեարկելու կամ չքվեարկելու վերաբերյալ ընտրողի որոշման գաղտնիությունը պաշտպանելու նպատակով:[29]

Թեկնածուների իրավունքները և Գրանցումը

Որպես թեկնածու առաջադրվելու իրավունք ունեն առնվազն 25 տարեկան ընտրողները, որոնք նախորդ չորս տարիների ընթացքում եղել են Հայաստանի Հանրապետության քաղաքացիներ, այդ ժամանակահատվածի առնվազն կեսը բնակվել են Հայաստանի Հանրապետությունում, չունեն երկքաղաքացիություն և տիրապետում են հայերեն լեզվին: Երկքաղաքացիություն ունեցող անձանց նկատմամբ սահմանված սահմանափակումները և դրանց հետ կապված քրեական պատասխանատվությունը, ինչպես նաև երկարատև ռեզիդենտության և լեզվի

---

27 Ռուսաստանի Դաշնությունում բնակվող 100 000 հայ ընտրողների տեղափոխումն ու ընտրություններին ներգրավումը կազմակերպելու ենթադրյալ ծրագրի վերաբերյալ հայտարարությունների կապակցությամբ՝ հունիսի 3-ին Ազգային ժողովի փոխնախագահը և էկոնոմիկայի նախարարը, որոնք երկուսն էլ առաջադրված էին որպես «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության թեկնածուներ, «Facebook» հարթակում հայտարարեցին, որ արտերկրից ժամանող հայ ընտրողների գալը ողջունելի եէ, սակայն նախազգուշացրին, որ նրանք, ովքեր կաշառքի դիմաց վերադառնան Հայաստան, ժամանելու պես կձերբակալվեն: Բոլոր ՀՀ քաղաքացիները, որոնք ունեն վավեր անձը հաստատող փաստաթուղթ և հաշվառված են Հայաստանի Հանրապետությունում որևէ հասցեում, կարող են անձամբ քվեարկել ընտրության օրը իրենց նշանակված ընտրական տեղամասում: Այն քաղաքացիները, որոնց անձը հաստատող փաստաթղթերի վավերականության ժամկետն ավարտվել է ընտրության օրվանից ավելի քան վեց ամիս առաջ, կարող են ՄՔԾ-ից ստանալ ժամանակավոր փաստաթուղթ, որի հիման վրա ընդգրկվում են ընտրողների լրացուցիչ ցուցակներում:

28 ՄԱԿ-ի փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի (ՄՓԳՀ) Գործառնական տվյալների պորտալի համաձայն՝ 2023 թվականի սեպտեմբերից ի վեր տեղահանվել է ավելի քան 115 000 հայ: Իշխանությունները ԺՀՄԻԳ ԸԴԱ-ին տեղեկացրել են, որ Հայաստանը 1990-ականներից մինչև 2023 թվականը հակամարտության գոտում բնակվող անձանց տրամադրել է հատուկ անձնագրեր, որոնք չէին շնորհում քաղաքացիության իրավունքներ, այդ թվում՝ ընտրելու իրավունք: 2026 թվականի մայիսին նման անձնագրեր ունեցող երեք անձ դիմել են Երևանի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան՝ ընտրացուցակներում ընդգրկվելու պահանջով, և դատարանը բավարարել է նրանց հայցադիմումները՝ հետևելով 2021 թվականին կայացված ավելի քան 120 նմանատիպ դատական որոշումների նախադեպին:

29 Տե՛ս Ընտրական օրենսգրքի և հարակից օրենսդրության փոփոխությունների նախագծերի վերաբերյալ ԺՀՄԻԳ-ի և Վենետիկի հանձնաժողովի 2023 թվականի համատեղ կարծիքի 39-րդ պարբերությունը, որտեղ նշվում է, որ «ընտրություններին փաստացի մասնակցած ընտրողների ցուցակի հրապարակումից պետք է խուսափել»:

իմացության պահանջները չեն համապատասխանում Եվրոպայի խորհրդի և այլ միջազգային չափանիշներին, ինչպես նաև լավագույն փորձին: [30]

Միայն քաղաքական կուսակցությունները կամ կուսակցությունների դաշինքներն ունեն թեկնածուներ առաջադրելու իրավունք: Անհատ թեկնածությունների առաջադրումը թույլատրված չէ, ինչը հակասում է ԵԱՀԿ պարտավորություններին:[31] Օրենքը նաև սահմանում է թեկնածուների առաջադրման հետ կապված լրացուցիչ ընթացակարգային պահանջներ և գրավի վճարման պահանջ: [32] Ընտրություններին մասնակցող կուսակցությունները (կուսակցությունների դաշինքները) պարտավոր էին ներկայացնել 80-ից 300 թեկնածու ընդգրկող թեկնածուների ցուցակներ, որոնցում մինչև 30 տոկոսը կարող էին լինել անկուսակցական անձինք, ինչպես նաև, չորս հիմնական ազգային փոքրամասնությունները ներկայացնող չորս թեկնածուների ոչ պարտադիր ցուցակ: Թեկնածուների ցուցակներում յուրաքանչյուր սեռի ներկայացուցիչները պետք է կազմեին առնվազն 30 տոկոս, իսկ յուրաքանչյուր ցուցակի առաջին 30 թեկնածուները պետք է հաստատվեին կուսակցության համագումարի որոշմամբ. Ցուցակում երեք հաջորդական թեկնածուներից կազմված յուրաքանչյուր խմբում պետք է ներկայացված լինեն երկու սեռերի ներկայացուցիչներ: Գրանցման փուլում բոլոր ցուցակները համապատասխանել են այս պահանջներին:[33]

Բաց և ներառական գործընթացի արդյունքում ԿԸՀ-ն գրանցել է 17 քաղաքական կուսակցություն և 2 դաշինք:[34] Թեկնածուների ցուցակներից ոչ մեկը կին չի գլխավորել: Չորս քաղաքական կուսակցություններ ներկայացրել էին ազգային փոքրամասնությունների ցուցակներ, որոնք ընդհանուր առմամբ ընդգրկում էին 20 թեկնածու: Մայիսի 28-ի՝

---

30 Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 2010 թվականի վճիռը «Թընասեն ընդդեմ Մոլդովայի» (Tănase v. Moldova) գործով, որով ՄԻԵԴ-ը եզրակացրել է, որ երկքաղաքացիների՝ խորհրդարան ընտրվելու իրավունքի արգելումը խախտում է ՄԻԵԴ թիվ 1 Արձանագրության 3-րդ հոդվածը: Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի վերաբերյալ 1996 թվականի թիվ 25 Ընդհանուր մեկնաբանության 15-րդ պարբերությունում նշվում է, որ «այն անձինք, որոնք այլ առումներով համապատասխանում են ընտրություններին մասնակցելու պահանջներին, չպետք է զրկվեն այդ իրավունքից անհիմն կամ խտրական պահանջների հիման վրա, ինչպիսիք են կրթությունը, բնակության վայրը կամ ծագումը»: Տե՛ս նաև Լավ ընտրական պրակտիկայի կանոնագրքի I.1.1.c.iii բաժինը, որի համաձայն՝ «բռեզիդենտության տևողության պահանջ կարող է սահմանվել քաղաքացիների համար միայն տեղական կամ տարածքային ընտրությունների դեպքում»:

31 1990 թվականի ԵԱՀԿ Կոպենհագենյան փաստաթղթի 7.5-րդ պարբերությամբ մասնակից պետությունները պարտավորվում են «հարգել քաղաքացիների իրավունքը՝ անհատապես կամ քաղաքական կուսակցությունների կամ կազմակերպությունների ներկայացուցիչների կարգավիճակով հավակնելու քաղաքական կամ պետական պաշտոնների»:

32 Քաղաքական կուսակցությունները (կուսակցությունների դաշինքները) պարտավոր են ներկայացնել կուսակցության կանոնադրությունը, թեկնածուների ցուցակը հաստատող համագումարի որոշումը, թեկնածուների գրավոր համաձայնությունները, իրենց քաղաքական ծրագիրը և ընտրական գրավ՝ կուսակցությունների համար 7,5 միլիոն դրամի (17 400 եվրո), իսկ դաշինքների համար՝ 15 միլիոն դրամի (34 900 եվրո) չափով: Ընտրական գրավը վերադարձվում է, եթե կուսակցությունը կամ դաշինքը հավաքում է ձայների առնվազն 2 կամ 4 տոկոսը՝ համապատասխանաբար:

33 Թեև օրենքը չի պահանջում, որ գրանցված թեկնածուների ցուցակները պահպանեն այս պահանջի համապատասխանությունը թեկնածուների հետագա ինքնաբացարկի կամ դուրս գալու դեպքում, գենդերային քվոտան կիրառվում է մանդատների բաշխման փուլում: Եթե կուսակցությանը կամ դաշինքին տրված մանդատների արդյունքում ավելի ներկայացված սեռի ներկայացուցիչները գերազանցում են մանդատների 70 տոկոսը, ապա մանդատների մի մասը փոխանցվում է պակաս ներկայացված սեռի թեկնածուներին՝ առնվազն 30 տոկոս ներկայացվածություն ապահովելու նպատակով: Եթե ընտրական ցուցակում այդպիսի թեկնածուներ չկան, համապատասխան մանդատները մնում են թափուր:

34 Ութ կուսակցություններից պահանջվել է լրացուցիչ փաստաթղթեր ներկայացնել դրանց ընտրական ցուցակներում ընդգրկված 35 թեկնածուների վերաբերյալ, և, օրենքի պահանջներին համապատասխան, նրանց տրամադրվել է 48 ժամ՝ բացթողումները շտկելու համար: Արդյունքում, այդ թեկնածուներից 23-ի գրանցումը մերժվել է՝ գրանցման պահանջները չկատարելու պատճառով: «Ալյանս» առաջադիմական ցենտրիստական կուսակցությունը և «Դեմոկրատիա, օրենք, կարգապահություն» կուսակցությունը վարչական դատարանում բողոքարկել են յուրաքանչյուր կուսակցությունից մեկ թեկնածուի գրանցումը մերժելու որոշումը, սակայն երկու բողոքներն էլ մերժվել են:

ինքնաբացարկների համար սահմանված օրենքով նախատեսված վերջնաժամկետի դրությամբ, 13 կուսակցություններից (կուսակցությունների դաշինքներից) 85 թեկնածու ինքնաբացարկ էր հայտնել՝ հիմնականում անձնական պատճառներով, որոն թվում՝ «Այլանս» առաջադիմական ցենտրիստական կուսակցության թեկնածուների ամբողջ ցուցակը: Ընտրություններին մասնակցել են 16 կուսակցություններից և 2 դաշինքներից առաջադրված ընդհանուր առմամբ 1,938 թեկնածու, որոնցից 724-ը կանայք էին (37.3 տոկոս):

Նախորդ օրվա հեռուստաբանավեճի ընթացքում վարչապետի հնչեցրած կոչից հետո, հունիսի 5-ին, «Հանրապետություն» կուսակցությունը դիմել է ԿԸՀ՝ պահանջելով անվավեր ճանաչել «Ուժեղ Հայաստան»-ի կ գրանցումը: Դիմումում նշվել է, որ առկա են ընտրակաշառքի բաժանման, նախընտրական ծախսերի սահմանաչափը գերազանցելու, կուսակցության ղեկավարի և թեկնածուների ցուցակը գլխավորող անձի երկքաղաքացիության, ինչպես նաև ցուցակի գրանցման համար ներկայացված փաստաթղթերի կեղծման դեպքեր: ԿԸՀ-ն բողոքը քննարկել է բաց նիստում, և երկու կուսակցություններին հնարավորություն է տրվել ներկայացնելու իրենց բանավոր փաստարկները: Բողոքը միաձայն մերժվել է, քանի որ ներկայացված մեղադրանքներից և ոչ մեկը չի հիմնավորվել:

Ընտրական քարոզարշավը

Պաշտոնական նախընտրական քարոզարշավը մեկնարկել էր մայիսի 8-ին և ավարտվել էր ընտրություններին նախորդող օրը: Օրենքը չի արգելում նշված ժամկետից շուտ քարոզչություն իրականացնելը, և շատ կուսակցություններ (կուսակցությունների դաշինքներ) քարոզչությունը իրականացրել են պաշտոնական նախընտրական քարոզարշավի մեկնարկից առաջ: Ինչևէ, քարոզարշավին վերաբերող կարգավորումների մեծ մասը գործում է միայն պաշտոնական նախընտրական քարոզարշավի ժամանակահատվածում, ինչը նվազեցնում է նախընտրական քարոզարշավին նախորդող ժամանակահատվածում իրականացվող գործունեության թափանցիկությունը և վերահսկողությունը (տե՛ս նաև «Նախընտրական ֆինանսավորում» բաժինը): Առցանց քարոզչությունը նույնպես շարունակում է մնալ չկարգավորված, բացառությամբ քարոզչական բովանդակության և վճարովի քաղաքական գովազդը նշելու պահանջների: Ընդհանուր առմամբ, քարոզարշավը եղել է ակտիվ և հիմնականում խաղաղ: Ընտրություններին մասնակցող կուսակցությունները (կուսակցությունների դաշինքները) օգտագործել են ընտրողների հետ հաղորդակցության տարբեր միջոցներ, այդ թվում՝ տպագիր և թվային քարոզչական նյութեր, առերես միջոցառումներ, ելույթներ լրատվամիջոցներում և առցանց հարթակներ: [35]

Քարոզարշավի ողջ ընթացքում զգալի տեղ է զբաղեցրել Ռուսաստանի Դաշնության կողմից գործադրված ուղղակի ճնշումը՝ արտահայտված առևտրային սահմանափակումների աստիճանական խստացմամբ և ընտրությունների արդյունքների հետ պայմանավորված երկրի

[35] ԺՀՄԻԳ ԸԴԱ-ի երկարաժամկետ դիտորդները (ԵԺԴ-ները) դիտարկել են 130 նախընտրական միջոցառում, որոնցից ամենամեծ բաժինը կազմակերպվել էր «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության և «Ուժեղ Հայաստան»-ի կողմից, որոնց հաջորդում էին «Հայաստան» դաշինքը և «Բարգավաճ Հայաստան» կուսակցությունը: Կանայք կազմել են ելույթ ունեցողների 18 տոկոսը և մասնակիցների 27 տոկոսը: Դիտարկված միջոցառումների շուրջ 89 տոկոսը հասանելի էր ֆիզիկական հաշմանդամություն ունեցող անձանց համար:

ապագա տնտեսական կայունությանը վերաբերող սպառնալիքներով:[36] Ռուսաստանի պաշտոնատար անձինք և պետության հետ փոխկապակցված դերակատարները բազմիցս ներկայացրել են ընտրությունները որպես Հայաստանի անվտանգության համար հետևանքներ ունեցող ընտրություն՝ այդ թվում Եվրոպական միության հետ առավել սերտ մերձեցման հնարավոր ռիսկերը շեշտադրելու նպատակով որպես նախազգուշացում վկայակոչելով ուկրաինական սցենարը:[37]

Քարոզարշավից առաջ և դրա ընթացքում հանրային դաշտում շրջանառվել են ընտրական խախտումների, այդ թվում՝ ընտրակաշառքների սխեմաների վերաբերյալ բազմաթիվ մեղադրանքներ, որոնք իշխանությունների կողմից ակտիվորեն քննության են առնվել:[38] Նման դեպքերում իշխանությունները երբեմն հրապարակել են գաղտնալսված մասնավոր զրույցները, այդ թվում՝ մեղադրվող անձանց խոսակցությունները, ինչը հարցականի տակ է դրել պատշաճ իրավական ընթացակարգերի պահպանումը: Այդ նյութերը տարածվել են նաև իշխող կուսակցության անդամների սոցիալական ցանցերի էջերում:[39] Այս քննությունների հիմնական թիրախում հայտնվել են «Ուժեղ Հայաստան»-ի, «Բարգավաճ Հայաստան»-ի և «Հայաստան» դաշինքի աջակիցները և թեկնածուները, ինչը հանգեցրել է օրենքի ընտրողի կիրառման ընկալման

---

36 Ռուսաստանի իշխանությունները մի շարք սահմանափակումներ են կիրառել Հայաստանի արտահանման նկատմամբ, այդ թվում՝ ծաղիկների, հանքային ջրի և ալկոհոլային խմիչքների մասով, ինչպես նաև սննդամթերքի նկատմամբ իրականացրել են ստուգումներ: 2026 թվականի մայիսին Աստանայում կայացած Եվրասիական տնտեսական միության գագաթնաժողովում միության առաջնորդները պահանջել են, որ Հայաստանը հանրաքվե անցկացնի՝ ընտրություն կատարելով միության և Եվրոպական միության միջև, և նախազգուշացրել են, որ Հայաստանի՝ դեպի Արևմուտք միտված քաղաքականության շարունակման դեպքում հնարավոր է նրա անդամակցության կասեցում: Մայիսի 27-ին նրանք հայտարարեցին բնական գազի, նավթամթերքի և ադամանդների մատակարարման պայմանները վերանայելու մտադրության մասին, իսկ մայիսի 28-ին հայտարարեցին լրացուցիչ գյուղատնտեսական ապրանքների նկատմամբ «ժամանակավոր սահմանափակումներ» կիրառելու մասին: Հայաստանի արտաքին գործերի նախարարը արձագանքեց այդ հայտարարություններից մի մասին՝ նշելով, որ երկիրը «շահագրգռված է Ռուսաստանի հետ բնականոն գործընկերության պահպանմամբ և զարգացմամբ»: Ի պատասխան այս սահմանափակումների՝ հունիսի 4-ին Եվրոպական միությունը խոստացել է ավելի քան 50 միլիոն եվրոյի անհապաղ ֆինանսական աջակցություն և հայտարարել է միջոցառումների մասին, որոնք ուղղված են տուժած հայկական ապրանքների առևտրի դյուրացմանը:

37 Մայիսի 9-ին Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինը Հայաստանի՝ Եվրոպական միությանը միանալու ձգտումները ներկայացրեց որպես այնպիսի գործընթաց, որը պարունակում է Ուկրաինայի առջև ծառացած ռիսկերին համադրելի վտանգներ: Մայիսի 30-ին Ռուսաստանի Դաշնությունը խորհրդակցությունների նպատակով հետ կանչեց Երևանում իր դեսպանին՝ «Հայաստանի ղեկավարության կողմից Եվրոպական միության հետ հարաբերությունների առավել սերտացմանն ուղղված քայլերի կապակցությամբ»:

38 Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը (ԿԿՀ) և Քննչական կոմիտեն (ՔԿ) լիազորված են քննելու ընտրական հանցագործությունների տարբեր կատեգորիաներ: Ընտրությունների նշանակման պահից ի վեր ՔԿ-ն հարուցել է ավելի քան 129 քրեական վարույթ, որոնց մեծ մասը վերաբերում է «Ուժեղ Հայաստան»-ի աջակիցներին: 89 անձի մեղադրանք է առաջադրվել, որոնցից 20-ը ընտրության օրը գտնվել են նախնական կալանքի տակ, իսկ 13-ը՝ տնային կալանքի պայմաններում: Նույն ժամանակահատվածի համար ԿԿՀ-ն հայտնել է, որ ընտրական հանցագործությունների վերաբերյալ նախաձեռնվել է 103 քրեական վարույթ, և դրանցից 52-ի շրջանակում ձերբակալվել է 193 անձ: 209 անձի նկատմամբ հարուցվել է քրեական հետապնդում: Դատախազները իրավասու դատարան են ներկայացրել ընտրական հանցագործություններին վերաբերող 14 քրեական վարույթ՝ 42 անձի մասնակցությամբ, որոնց մեծ մասը «Ուժեղ Հայաստան»-ի անդամներ կամ աջակիցներ են: Դրական է, որ ԿԿՀ-ն և քաղաքացիական հասարակության որոշ կազմակերպություններ իրականացրել են հանրային իրազեկման արշավներ՝ ուղղված ձայների գնման կանխարգելմանը՝ սահմանային անցակետերում բաժանվող թռուցիկների, SMS հաղորդագրությունների և լրատվամիջոցների միջոցով:

39 ՀԿԿ-ի կայքում հրապարակվել են գաղտնալսված հաղորդակցությունների ավելի քան 20 ձայնագրություններ՝ ուղեկցվելով հայտարարություններով, որոնցում ընդդիմադիր քաղաքական կուսակցությունները մեղադրվում էին ընտրակաշառք բաժանելու մեջ, և որոնք հրապարակվել են նախաքննության ընթացքում: Մայիսի 20-ին, «Ուժեղ Հայաստան»-ի և «Հայաստան» դաշինքի կողմից ներկայացված երկու դիմումների հիման վրա, ԿԸՀ-ն հանձնարարել է ինչպես Քննչական կոմիտեին, այնպես էլ Հակակոռուպցիոն կոմիտեին զերծ մնալ տարածվող հաղորդագրություններում կուսակցությունների և դաշինքների անվանումները հիշատակելուց:

ձևավորմանը և մտահոգություններ է առաջացրել քարոզարշավի վրա դրա ազդեցության վերաբերյալ:[40] Բացի այդ, ՄԸԴԱ-ի բազմաթիվ զրուցակիցներ նշել են, որ այդ իրավիճակը նաև զսպող ազդեցություն է ունեցել ընտրողների վրա՝ նրանց հետ պահելով ընդդիմության հետ առնչվող գործունեությանը մասնակցելուց, այդ թվում՝ առցանց հարթակներում, ինչը հակասում է ԵԱՀԿ պարտավորություններին:[41]

«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության նախընտրական ծրագրի հիմնական թեմաները, ինչպես նաև կուսակցության առաջնորդի գործունեությունը, քարոզարշավի հիմնական շարժիչ ուժն էին:[42] Քարոզարշավի առանցքային թեմաներից էին խաղաղությունը, տարածաշրջանային կայունությունը, Ադրբեջանի հետ հարաբերությունները, տեղահանված հայ փախստականների կարգավիճակը, Ադրբեջանում պահվող հայ կալանավորված անձանց իրավիճակը, ինչպես նաև բնակչության կենսամակարդակը, առողջապահությունը, տնտեսությունը, իրավունքի գերակայությունը և կոռուպցիայի դեմ պայքարի քաղաքականությունը: Միևնույն ժամանակ, Եվրոպական միության և Միացյալ Նահանգների որոշ նշանավոր առաջնորդներ հրապարակայնորեն աջակցություն են հայտնել վարչապետին, ինչը ՄԸԴԱ-ի հետ հանդիպած ընդդիմադիր կուսակցությունների մեծ մասի կողմից ընկալվել է որպես արտաքին ներգրավվածություն՝ հօգուտ իշխող կուսակցության:[43]

---

40 «Բարգավաճ Հայաստան» և «Ուժեղ Հայաստան»-ի թեկնածուների, այդ թվում՝ «Ուժեղ Հայաստան»-ի կ ցուցակը գլխավորող թեկնածուի նկատմամբ նախաձեռնվել են մի շարք քրեական հետաքննություններ: Մեղադրանքների մի մասը վերաբերում էր ենթադրյալ իրավախախտումների, որոնք կատարվել էին մի քանի տարի առաջ: Մայիսի 21-ին վարչապետը հայտարարեց «Բարգավաճ Հայաստան» կուսակցության թեկնածուներից մեկի ձերբակալության մասին՝ փաստացի ձերբակալությունից մեկ օր առաջ: Երևանում և մարզերի մեծ մասում ԺՀՄԻԳ ԸԴԱ երկարաժամկետ դիտորդները տեղեկություններ են ստացել վախի մթնոլորտի առկայության վերաբերյալ, ըստ որոնց՝ ընդդիմադիր ակտիվիստների նկատմամբ կիրառվել է ճնշում, հարուցվել է քրեական հետապնդում կամ էլ վերջիններս կալանավորվել են (Արարատ, Արագածոտն, Արմավիր, Գեղարքունիք, Լոռի, Կոտայք, Շիրակ, Սյունիք, Տավուշ և Վայոց ձոր մարզերում):

41 ԵԱՀԿ 1990 թվականի Կոպենհագենի փաստաթղթի 7.7-րդ կետը պահանջում է, որ «օրենքը և պետական քաղաքականությունը հնարավորություն տան քաղաքական քարոզարշավն իրականացնել արդար և ազատ մթնոլորտում, որտեղ ոչ վարչական գործողությունները, ոչ բռնությունը, ոչ էլ ահաբեկումը չեն խոչընդոտում կուսակցություններին և թեկնածուներին ազատորեն ներկայացնելու իրենց տեսակետներն ու որակավորումները, ինչպես նաև չեն խանգարում ընտրողներին ծանոթանալ և քննարկել դրանք կամ քվեարկել՝ առանց հետապնդման վախի»:

42 «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության նախընտրական ծրագիրը հիմնված էր կառավարության «Իրական Հայաստան» ծրագրի վրա՝ կենտրոնանալով խաղաղության և տարածաշրջանային կարգավորման օրակարգի առաջմղման վրա՝ «Խաղաղության խաչմերուկ» նախաձեռնության միջոցով: Ծրագրում ներառված էր նաև Հայ Առաքելական Եկեղեցու բարեփոխմանը վերաբերող դրույթ, որը Եկեղեցին և ընդդիմությունը քննադատել են՝ այն համարելով հակասահմանադրական:

43 2026 թվականի փետրվարին ԱՄՆ փոխնախագահն այցելել է Հայաստան: Մայիսին կայացած Հայաստան–ԵՄ գագաթնաժողովից հետո Ֆրանսիայի նախագահը մայիսի 5-ին Գյումրիում վարչապետի հետ մասնակցել է լայնամասշտաբ հանրային միջոցառման և հրապարակայնորեն հայտնել իր աջակցությունը: Մայիսի 26-ին ԱՄՆ պետքարտուղարը պաշտոնական այց է կատարել Հայաստան՝ նպատակ ունենալով ամրապնդել ԱՄՆ–Հայաստան ռազմավարական գործընկերությունը՝ հետևելով 2026 թվականի հունվարին հրապարակված ԱՄՆ–Հայաստան համատեղ հայտարարությանը, որը վերաբերում էր «Միջազգային խաղաղության և բարգավաճման համար Թրամփի ուղու» (TRIPP) նախաձեռնության իրականացման շրջանակին: Մայիսի 28-ին ԱՄՆ նախագահը Truth Social սոցիալական հարթակում աջակցություն է հայտնել վարչապետի վերընտրմանը:

Քարոզարշավի ընթացքում հնչեցրած հռետորաբանությունը հաճախ եղել է առճակատային և ուղեկցվել է պատերազմին առնչվող հայտարարություններով: [44] Որոշ ընդդիմադիր կուսակցություններ (կուսակցությունների դաշինքներ) նույնպես նպաստել են այդ մթնոլորտի ձևավորմանը՝ առանց հիմնավորման պնդելով, որ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության հաղթանակը կհանգեցնի մեծ թվով ադրբեջանցիների վերաբնակեցմանը Հայաստանում:[45]Քարոզարշավի մի շարք միջոցառումների ընթացքում վարչապետը կիրառել է վիրավորական և հրահրող արտահայտություններ, այդ թվում՝ տեղահանված հայ փախստականների հասցեին: [46] Որոշ դեպքերում վարչապետը նաև հրապարակայնորեն սպառնացել է ընդդիմադիր թեկնածուներին հետաքննություններով և նրանց պատկանող ընկերությունների ազգայնացմամբ: Ազգայնացման գործընթացներից մի քանիսը սկսվել էին դեռևս նախքան նախընտրական քարոզարշավի ժամանակահատվածը: [47]

Օրենքը արգելում է օգտագործել վարչական ռեսուրսները նախընտրական քարոզչության ժամանակ: Դրական է, որ վերջին փոփոխությունները ավելի են հստակեցրել նշված արգելքը և ընդլայնել են քարոզչական գործունեությունից զերծ մնալու պարտավորություն ունեցող սուբյեկտների ցանկը: Իշխող կուսակցության թեկնածուների մեծ մասը պետական

---

44 Պարոն Փաշինյանը բազմիցս ներկայացրել է ընտրությունները խիստ անվտանգային համատեքստում՝ պնդելով, որ ընդդիմության հաղթանակը կհանգեցնի պատերազմի, և «Ուժեղ Հայաստան», «Բարգավաճ Հայաստան» և «Հայաստան» դաշինքի առաջնորդներին բնութագրել է որպես «պատերազմի եռագլուխ կուսակցություն»: Մայիսի 18-ին «Ուժեղ Հայաստանը» դիմում է ներկայացրել ԿԸՀ՝ պնդելով, որ պարոն Փաշինյանի նախընտրական ելույթը հրահրում է թշնամանք և ատելություն քաղաքական մրցակիցների նկատմամբ, ինչպես նաև նվաստացնում է նրանց արժանապատվությունը: Մայիսի 25-ին ԿԸՀ-ն արձանագրել է, որ դիմումը չի պարունակում օրենքի խախտման մասին վկայող տեղեկություններ: Մի շարք նախընտրական միջոցառումների ընթացքում «Հայաստան» դաշինքի առաջնորդը վարչապետի հասցեին օգտագործել է խիստ վիրավորական և խտրական բնույթի արտահայտություններ: ԺՀՄԻԳ ԸԴԱ երկարաժամկետ դիտորդների տվյալներով՝ դիտարկված նախընտրական միջոցառումների ավելի քան 13 տոկոսի ընթացքում արձանագրվել են խտրական կամ ատելություն պարունակող հայտարարություններ:

45 «Ուժեղ Հայաստան»-ի առաջնորդը բազմիցս հայտարարել է, որ 300 000 ադրբեջանցիներ կբնակվեն Հայաստանում:

46 Օրինակ, մայիսի 18-ին Երևանի Արաբկիր վարչական շրջանում անցկացվող նախընտրական միջոցառման ժամանակ մի անձի հետ ունեցած բանավոր վիճաբանությունից հետո պարոն Փաշինյանը օգտագործել է խիստ նվաստացուցիչ և վիրավորական արտահայտություններ, այդ թվում՝ տեղահանված հայ փախստականի հասցեին: Նույն օրը տվյալ անձը՝ Արթուր Օհանյանը ձերբակալվել է, նրան մեղադրանք է առաջադրվել խուլիգանության, բռնության հրապարակային կոչերի և նախընտրական գործունեությանը խոչընդոտելու համար, և նրա նկատմամբ որպես խափանման միջոց ընտրվել է երկու ամսով նախնական կալանքը: Քաղաքացիական հասարակության մի շարք կազմակերպություններ դատապարտել են բանավոր վիճաբանությանը հաջորդած կալանավորումը՝ այն գնահատելով որպես անհամաչափ և քաղաքական շարժառիթներով պայմանավորված քայլ: Դրան հաջորդեց Մարդու իրավունքների պաշտպանի հայտարարությունը, իսկ Մարդու իրավունքների միջազգային ֆեդերացիան մտահոգություն հայտնեց նրա կողմից հայտարարված հացադուլի կապակցությամբ: Ընտրական քարոզարշավների համատեքստում խոսքի ազատության, ատելության խոսքի արգելքի և բազմակարծության խթանման վերաբերյալ 2026 թվականի Վենետիկի հանձնաժողովի զեկույցի 100-րդ պարբերությունում առաջարկվում է, որ «...ընտրական քարոզարշավների ընթացքում ատելության խոսքի դրսևորումների վերաբերյալ ապահովեն արագ և ժամանակին արձագանք, քանի որ դրանք ոչ միայն ազդեցություն են ունենում խոցելի փոքրամասնությունների խմբերի վրա, այլև խեղաթյուրում են հանրային բանավեճը»:

47 Մայիսի 13-ին Արագածոտնի մարզում պարոն Փաշինյանը հայտարարել է, որ «Ուժեղ Հայաստան»-ի առաջնորդին պատկանող էլեկտրաէներգետիկ ընկերությունը ամբողջությամբ ազգայնացվելու է, իսկ մայիսի 20-ին Լոռու մարզում սպառնացել է փակել «Բարգավաճ Հայաստան» կուսակցության առաջնորդին պատկանող բիզնեսները: Էլեկտրաէներգետիկ ընկերության շուրջ վեճը ծագել էր 2025 թվականի հունիսին՝ պարոն Կարապետյանի՝ Եկեղեցուն հրապարակային աջակցություն հայտնելուց հետո նրա ձերբակալությունից հետո, ինչպես նաև 2025 թվականի հուլիսին Ազգային ժողովի կողմից շտապ կարգով ընդունված օրենսդրական փոփոխություններից հետո, որոնք հնարավորություն էին տալիս ազգայնացնել ընկերությունը: Այդ հարցով դատական վարույթները դեռևս ընթացքի մեջ են: Մայիսի 28-ին մամուլի ասուլիսի ընթացքում պարոն Փաշինյանը, հանդես գալով որպես վարչապետ, «Բարգավաճ Հայաստան» կուսակցության առաջնորդին սպառնացել է ձերբակալությամբ և նրան պատկանող ընկերությունների ազգայնացմամբ:

պաշտոնատար անձինք էին, որոնք, օրենքի պահանջներին համապատասխան, քարոզարշավի ընթացքում կասեցրել են իրենց պաշտոնական լիազորությունների իրականացումը:[48] Թեև ԺՀՄԻԳ ԸԴԱ-ն տեղական մակարդակում քարոզչության նպատակով վարչական ռեսուրսների համակարգային օգտագործում չի արձանագրել, սակայն անմիջականորեն դիտարկել և ստացել են ընտրողների նկատմամբ ճնշում գործադրելու վերաբերյալ բազմաթիվ հաղորդումներ, որոնք վերաբերվում էին իշխող կուսակցության նախընտրական հանրաքվեներին մասնակցելու նպատակով անձանց ներգրավելուն:[49] Բացի այդ, ընտրություններից առաջ կառավարության կողմից հայտարարվել կամ ներդրվել են մի շարք սոցիալական և տնտեսական միջոցառումներ, որոնք լայնորեն ընկալվել են որպես իշխող կուսակցությանը նպաստող քայլեր:[50] Նման գործելակերպը հակասում է ԵԱՀԿ պարտավորություններին և միջազգային չափանիշներին, որոնք պահանջում են պետության և քաղաքական կուսակցությունների միջև հստակ տարանջատում, և կարող է խաթարել ընտրություններին մասնակցող կուսակցությունների) կուսակցությունների դաշինքների) համար հավասար հնարավորությունների սկզբունքը:[51] Մի քանի դեպքերում ԸԴԱՄ-ի զրուցակիցները պնդել են, որ «Բարգավաճ Հայաստան»-ի և «Ուժեղ Հայաստան»-ի ղեկավարների հետ փոխկապակցված մասնավոր ընկերություններում աշխատող ընտրողների նկատմամբ քվեարկելու կամ նրանց նախընտրական միջոցառումներին մասնակցելու նպատակով ճնշում է գործադրվել:

Սոցիալական ցանցերը հանդիսանում էին տեղեկատվության հիմնական աղբյուրը, ընդ որում ամենալայն կիրառություն ունեցող հարթակը «Facebook»-ն էր: Ընտրություններին մասնակցող սուբյեկտների մեծ մասը ակտիվ քարոզչություն էր իրականացնում սոցիալական ցանցերում, որտեղ հիմնականում տարածվում էին քարոզչական միջոցառումների, հարցազրույցների և

---

48 «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ցուցակի ավելի քան 90 տոկոսը կազմված էր պետական և հանրային հատվածի աշխատողներից (284 թեկնածուներից 184-ը պետական ծառայողներ էին, 11-ը՝ պետական պաշտոնատար անձինք, իսկ 52-ը՝ Ազգային ժողովի գործող պատգամավորներ): ԺՀՄԻԳ ԸԴԱ երկարաժամկետ դիտորդները հայտնել են, որ դիտարկված նախընտրական միջոցառումների ավելի քան 27 տոկոսի ընթացքում ներկա են եղել պետական պաշտոնատար անձինք:

49 ԺՀՄԻԳ ԸԴԱ երկարաժամկետ դիտորդները Երևանից և ինը մարզերից ստացել են տեղեկություններ նախընտրական միջոցառումներին մասնակցելու նպատակով ճնշումների և խրախուսումների վերաբերյալ, հիմնականում՝ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության կողմից: Դրանք ներառում էին հաղորդումներ այն մասին, որ պետական ծառայողներին հարկադրել են մասնակցել «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության նախընտրական միջոցառումներին: Առանձին դեպքերում մարդկանց հարկադրել են մասնակցել նաև «Հայաստան» դաշինքի կամ «Բարգավաճ Հայաստան» կուսակցության միջոցառումներին: Մայիսի 13-ին Արագածոտնի մարզում հաղորդվել է, որ ուսանողներին բաժանվել են նախընտրական նյութեր և հանձնարարություն է տրվել մասնակցել «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության միջոցառմանը, որից հետո վարչապետը հայտարարել է, որ անձամբ հանձնարարել է դպրոցի տնօրեններին հրաժարական տալ: Մայիսի 16-ին Երևանում նոր ձեռք բերված քաղաքային ավտոբուսները հրապարակայնորեն ներկայացվել և գովազդվել են վարչապետի և քաղաքի քաղաքապետի կողմից, որը «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության թեկնածու է:

50 Դրանք ներառում էին 2026 թվականի հունվարից համընդհանուր առողջապահական ապահովագրության ներդրումը, 2026 թվականի ապրիլից կենսաթոշակների և հաշմանդամության նպաստների բարձրացումը, ավագ պաշտոնատար անձանց և նախարարությունների աշխատակիցների համար կատարողականի վրա հիմնված պարգևավճարների և հավելավճարների տրամադրումը, մարտին հայտարարված լրացուցիչ տարածաշրջանային ֆինանսավորումը, ապրիլին հայտարարված զրոյական տոկոսադրույքով գյուղատնտեսական վարկերը, ինչպես նաև մայիսին քաղաքացիների որոշ խմբերի չվճարված պարտքերի զիջումը: Մայիսի 16-ին նախընտրական հանրահավաքի ընթացքում պարոն Փաշինյանը խոստացել է վարչական արտոնություն, ըստ որի՝ միավորային համակարգով ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների հետևանքով վարորդական իրավունքը կորցրած անձանց այն ավտոմատ կերպով կվերականգնվի՝ առանց կրկին քննություն հանձնելու: Սակայն կառավարության կողմից հետագայում ներկայացված համապատասխան առաջարկը չի ընդունվել Ազգային ժողովի կողմից՝ քվորումի բացակայության պատճառով:

51 ԵԱՀԿ 1990 թվականի Կոպենհագենի փաստաթղթի 5.4-րդ կետը պահանջում է «պետության և քաղաքական կուսակցությունների միջև հստակ տարանջատում»: Տե՛ս նաև Վենետիկի հանձնաժողով-ի և ԺՀՄԻԳ-ի 2016 թվականի «Ընտրական գործընթացների ընթացքում վարչական ռեսուրսների չարաշահման կանխարգելման և դրան արձագանքման համատեղ ուղեցույցները»:

կուսակցությունների առաջնորդների տեսաուղերձների վերաբերյալ նյութեր:[52] Առցանց քարոզարշավը ունեցել է առճակատային և բաժանարար բնույթ՝ առանձնանալով ընտրություններին մասնակցող կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) ներկայացուցիչների միջև անձնական հարձակումներով և հրահրող հռետորաբանությամբ, հատկապես վարչապետի, իսկ որոշ դեպքերում նաև ընդդիմության առաջնորդների կողմից:[53] Քարոզարշավի կարևոր թեմաներից էին կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) կողմից հնչեցվող արտաքին միջամտության և օտար պետությունների հետ կապերի վերաբերյալ մեղադրանքները, որոնք երբեմն հանգեցրել են նաև դավադրապաշտական բնույթի պնդումների տարածմանը: Ընդդիմության առաջնորդները պնդում էին, թե «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունը կապեր ունի Ադրբեջանի ղեկավարության հետ, մինչդեռ կառավարության բարձրաստիճան ներկայացուցիչները բազմիցս մեղադրել են ընդդիմության ներկայացուցիչներին Ռուսաստանի Դաշնությանը հավատարիմ լինելու մեջ:[54]

ԺՀՄԻԳ ԸԴԱ-ն արձանագրել է X հարթակում (որը Հայաստանում ունի սահմանափակ լսարան) անգլերեն լեզվով հրապարակումների մեծ քանակ, որոնք պարունակում էին մանիպուլյատիվ և կեղծ բովանդակություն՝ ուղղված վարչապետի, կառավարության և ընտրական գործընթացի վարկաբեկմանը:[55] Այս դիտարկումները համընկնում են փաստերի ստուգմամբ զբաղվող կազմակերպությունների եզրակացությունների հետ, որոնք արձանագրել են համակարգված

---

52 Հիմնական քաղաքական կուսակցությունների և դրանց առաջնորդների ֆեյսբուքյան էջերի շրջանում ամենամեծ թվով հետևորդներ ուներ վարչապետը՝ շուրջ 1,2 միլիոն: Նրան հաջորդում էին Էդմոն Մարուքյան-ը («Լուսավոր Հայաստան»)՝ շուրջ 190 000 հետևորդով, Հայկ Մարության-ը («Նոր ուժ» կուսակցություն)՝ 179 000 հետևորդով, Գագիկ Ծառուկյան-ը («Բարգավաճ Հայաստան»)՝ 147 000 հետևորդով, Ռոբերտ Քոչարյան-ը («Հայաստան» դաշինք)՝ 128 000 հետևորդով, և Սամվել Կարապետյան-ը («Ուժեղ Հայաստան»)՝ 74 000 հետևորդով: ԺՀՄԻԳ ԸԴԱ-ն մշտադիտարկել է 67 հաշիվ՝ «Facebook», «Instagram» և «Telegram» հարթակներում:

53 Մայիսի 14-ին Facebook-ում հրապարակված տեսանյութերից մեկում պարոն Փաշինյանը հայտարարել է, որ եթե պարոն Քոչարյանը ուղիղ եթերի ընթացքում կարողանա առանց տառասխալ գրել «ինքնություն» բառը, ապա ինքը «նրան համբալ չի անվանի», այլ կդիմի նրան անունով: Մայիսի 27-ին, անդրադառնալով պարոն Կարապետյանին, նա Facebook-ում տարածել է, որ «Կալուգայից օլիգարխը [...] պետք է հայտնվի քրեակատարողական հիմնարկում՝ որպես լրտես, հոսանքի գող և փող լվացող»: Մեկ այլ տեսանյութում նա հայտարարել է, որ «Ղարաբաղի պսեվդո էլիտան [...] այս քաղաքական պրոցեսի արդյունքում պետք է ծնկի բերվի»: «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունն ընդունել էր Էթիկայի կանոնագիրք, որով կուսակցության անդամներից պահանջվում էր «մերժել ատելության խոսքը, վիրավորանքները, հետապնդումը, ահաբեկումը կամ ճնշման ցանկացած այլ ձև»՝ ինչպես առցանց, այնպես էլ անցանց միջավայրում: «Հայաստան» դաշինքի առաջնորդը մի շարք նախընտրական միջոցառումների ընթացքում օգտագործել է նվաստացուցիչ և վիրավորական արտահայտություններ, որոնց տեսագրությունները հրապարակվել են նրա ֆեյսբուքյան էջում: Մասնավորապես, մայիսի 16-ին նա պարոն Փաշինյանին անվանել է «հարբեցող ծաղրածու», իսկ մայիսի 27-ին անվանել է «Ալիևի տուզիկ»: Մայիսի 18-ին «Հայաստան» դաշինքի թեկնածուներից մեկը Facebook-ում, անդրադառնալով վարչապետին, գրել է. «Այս մարդուն կատաղության դեմ պատվաստում է պետք»:

54 Մայիսի 19-ին «The Insider»-ի հրապարակած հոդվածում պնդվում էր, որ «Ուժեղ Հայաստան» -ի առաջնորդ պարոն Կարապետյանը գործել է որպես օտարերկրյա գործակալ: Հոդվածը հետագայում լրացուցիչ տարածվել է սոցիալական ցանցերի հարթակներում տեղադրված երրորդ կողմերի կողմից վճարված գովազդների միջոցով: Մայիսի 19-ին Ազգային ժողովի նախագահը և «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության թեկնածուն «Facebook»-ում հայտարարել է, որ պարոն Կարապետյանը «Ռուսական ԱԴԾ-ի աշխատակից է», իսկ մայիսի 24-ին նա մեղադրել է «Ուժեղ Հայաստան»-ի ցուցակը գլխավորող Նարեկ Կարապետյանին Ռուսաստանի քաղաքացի լինելու մեջ: Մայիսի 21-ին «Հայաստան» դաշինքի առաջնորդը նախընտրական միջոցառման ժամանակ հայտարարել է, որ «ով քվեարկում է Նիկոլի [Փաշինյանի] համար, քվեարկում է Ալիևի համար»՝ նկատի ունենալով Ադրբեջանի նախագահին: Նույն օրը կուսակցության ցուցակի երրորդ համար Աննա Գրիգորյանը «Facebook»-ում, անդրադառնալով պարոն Փաշինյանին, հայտարարել է, որ «բավական է պարզապես նայել, թե ինչ է ասում Ալիևը, և թե ինչ ես անում դու Հայաստանում»: Մայիսի 23-ին «Հայաստան» դաշինքի ցուցակի երկրորդ համար Իշխան Սաղաթելյանը հայտարարել է, որ «այս իշխանությունը թշնամու գերին է»:

55 Բացի այդ, մայիսի 22-ին X հարթակում հրապարակվել է տեսանյութ պարունակող գրառում, որում չարաշահվել է ԺՀՄԻԳ-ի տարբերանշանը և կեղծ պնդում է տարածվել, առ այն թե ԺՀՄԻԳ-ը հայտնաբերել է ԿԸՀ-ի գաղտնի վերահսկման ծրագրային ապահովում, որը կարող է օգտագործվել ընտրակեղծիքներ իրականացնելու նպատակով:

տեղեկատվական մանիպուլյացիոն գործողությունների աճ, որոնց հիմնական աղբյուրը, ըստ վերջիններիս, եղել են Ռուսաստանի Դաշնությունում գործող դերակատարները: [56] Այն դեպքերում, երբ նման նարատիվները ներթափանցել են Հայաստանի ներքին տեղեկատվական միջավայր, դրանք հետագայում լայնորեն տարածվել են «Telegram» հարթակում: ՄԸԴԱ-ի մի շարք զրուցակիցներ նաև մտահոգություններ են հայտնել երկրի ներսում գեներացվող մանիպուլյատիվ նարատիվների և հիմնական կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) կողմից հավանական «տրոլների գործարանների» օգտագործման վերաբերյալ: Երրորդ կողմ հանդիսացող օգտատերերի հաշիվները նույնպես իրականացրել են առցանց քարոզչություն և, որոշ թեկնածուների հետ միասին իրենց քաղաքական մրցակիցներին վարկաբեկելու նպատակով տարածել են արհեստական բանականությամբ ստեղծված և այլ մանիպուլյատիվ բովանդակություն, որը հետագայում լայնորեն տարածվել է: [57] Նման՝ դիտավորությամբ մոլորեցնող նարատիվների և պառակտող հռետորաբանության օգտագործումը բացասաբար է ազդել ընտրողներին հասանելի տեղեկատվության արժանահավատության վրա:

Հիբրիդային սպառնալիքների և արտաքին ազդեցության գործողությունների աճին արձագանքելու նպատակով կառավարությունը ձգտել է բարձրացնել իր պատրաստվածության մակարդակը 2025 թվականին ընդունված օրենսդրական փաթեթի միջոցով, որը վերաբերում էր կիբեռանվտանգությանը, հանրային տեղեկատվության կառավարմանը և թվայնացման ոլորտը կարգավորող մարմնի՝ Տեղեկատվական համակարգերի կարգավորման հանձնաժողովի ստեղծմանը: Սակայն նշված հանձնաժողովը մինչև ընտրությունները դեռևս չէր սկսել գործել:

Քարոզարշավի ընթացքում մի շարք պետական մարմիններ մշտադիտարկում են իրականացրել առցանց տեղեկատվական միջավայր նկատմամբ: ԿԸՀ-ն համագործակցել է Հայաստանի տեղեկատվական համակարգերի գործակալության (ՀՏՀԳ) հետ, որը հայտնաբերել է տարբեր կիբեռսպառնալիքներ և արձագանքել դրանց, ինչպես նաև իրականացրել է սոցիալական ցանցերի հարթակներում համակարգված ոչ իրական վարքագծի մշտադիտարկում: ԿԸՀ-ն «TikTok»-ի հետ ունեցել է անմիջական կապի ալիքներ, իսկ Արտաքին գործերի նախարարությունը, Ներքին գործերի նախարարությունը և ԿԸՀ-ն հանդես են եկել որպես «Meta» հարթակին խախտումների մասին հաղորդումներ ներկայացնելու պատասխանատու մարմիններ: Հարթակներից և ոչ մեկը քարոզարշավի ընթացքում չի հրապարակել տվյալներ համակարգված ազդեցության գործողությունների կամ դրանց առնչվող կիրառված միջոցների վերաբերյալ, թեև հայտնել են, որ պաշտոնական քարոզարշավի մեկնարկից առաջ սահմանափակել է ընտրություններին առնչվող այն բովանդակությունը, որը խախտել է իրենց

---

56 Տե՛ս նաև «Փաստերի ստուգման հարթակ»-ի 2026 թվականի մայիսի 16-ի զեկույցը, CivilNet-ի մայիսի 19-ի զեկույցը և մայիսի 20-ի զեկույցը, «Media Diversity Institute»-ի մայիսի 20-ի զեկույցը, ինչպես նաև «Organized Crime and Corruption Reporting Project»-ի մայիսի 24-ի զեկույցը:

57 Օրինակ, «Ուժեղ Հայաստան»-ի հիմնական ուղերձներից մեկը վերաբերում էր ընտրություններից հետո Հայաստանում ադրբեջանցիների վերաբնակեցման ենթադրյալ ծրագրին: Այդ ուղերձը տարածվել է արհեստական բանականությամբ ստեղծված տեսանյութերի միջոցով, որոնցում, ի թիվս այլնի, պատկերված էր ադրբեջանցի «վերաբնակիչների» զանգվածային տեղափոխումը և հայկական մանկապարտեզների նկատմամբ նրանց վերահսկողության հաստատումը: Վարչապետը բազմիցս հերքել է ադրբեջանցիների ծրագրավորված վերաբնակեցման մասին պնդումները: Երրորդ կողմերի մի շարք հաշիվներ տարածել են պնդումներ, թե պարոն Կարապետյանը խոստացել է 300 000 հայ տղամարդ ուղարկել՝ աջակցելու Ռուսաստանի Դաշնության կողմից Ուկրաինայի դեմ իրականացվող ներխուժմանը: «Բարգավաճ Հայաստան» կուսակցությունը Facebook-ում հրապարակել է արհեստական բանականությամբ ստեղծված տեսանյութ, որում վարչապետը ներկայացվում է որպես «Արևմտյան Ադրբեջանի նահանգապետ»: Facebook-ում տարածվել են նաև պարոն Փաշինյանի մասնակցությամբ կեղծ, արհեստական բանականությամբ ստեղծված տեսանյութեր, որոնցում նա իբր օգտագործում է ատելության խոսք կենսաթոշակառուների, զինծառայողների և փոքր բիզնեսի ներկայացուցիչների նկատմամբ:

համայնքային կանոնները:[58] Իշխանությունները դրական են գնահատել սոցիալական ցանցերի հարթակների պատրաստակամությունը՝ համագործակցելու տեղական փաստերի ստուգմամբ զբաղվող կազմակերպությունների հետ, սակայն նշել են, որ հարթակների արձագանքը նշագրված (flagged) բովանդակությանը հաճախ դանդաղ է եղել:

Հանրային կապերի և տեղեկատվության կենտրոնը (ՀԿՏԿ) աջակցել է վարչապետի աշխատակազմի Ռազմավարական հաղորդակցությունների վարչությանը՝ ապատեղեկատվության դեմ կառավարության արձագանքը համակարգելու գործում: [59] Ընտրություններին նախորդող ժամանակահատվածում իշխանությունների դիմումի հիման վրա ԵՄ հիբրիդային արագ արձագանքման խումբը հիբրիդային սպառնալիքներին հակազդելու նպատակով խորհրդատվական աջակցություն է տրամադրել պետական հաստատություններին:[60] ՀԿՏԿ-ն տարածել է ապատեղեկատվության վերաբերյալ իրազեկման նյութեր և հանրության համար ստեղծել փաստերի ստուգման հարթակ, սակայն այդ գործիքը լայնորեն չի հանրայնացվել: Ընդհանուր առմամբ, իշխանությունները ձեռնարկել են զգալի քայլեր ապատեղեկատվությանը հակազդելու ուղղությամբ, այդ թվում՝ միջգերատեսչական համագործակցության և արտաքին խորհրդատվական աջակցության միջոցով: Սակայն նման համագործակցության կարգավորող և ինստիտուցիոնալ հիմքերի, քարոզարշավի ընթացքում ապատեղեկատվության մշտադիտարկման և դրան արձագանքելու վերաբերյալ իշխանությունների գործունեության, ինչպես նաև ապատեղեկատվական նարատիվները ժամանակին և արժանահավատ կերպով հերքելու ուղղությամբ իրականացված գործողությունների մասին հանրամատչելի տեղեկատվության պակասը սահմանափակել է

---

58 2026 թվականի մարտի դրությամբ «TikTok»-ը հեռացրել էր շուրջ 80 ոչ իրական հաշիվ՝ 27 892 հետևորդով, որոնք գործել են Ռուսաստանի Դաշնությունից, թիրախավորել են Հայաստանի, Մոլդովայի և Վրաստանի լսարանները և փորձել են ուժեղացնել որոշ քաղաքական գործիչների օգտին և մյուսների դեմ ուղղված քարոզչական ուղերձները՝ հիմնականում Հայաստանի խորհրդարանական ընտրությունների համատեքստում: «Google»-ը, «Meta»-ի աջակցությամբ, արգելափակել է Ռուսաստանի հետ առնչվող համակարգված ազդեցության գործողության հետ կապված 63 «YouTube» ալիք, որոնք տարածում էին արաբերեն, հայերեն, անգլերեն, ղազախերեն և ուկրաիներեն բովանդակություն: Արգելափակվել են նաև մեկ այլ գործողության հետ կապված 25 «YouTube» ալիք՝ հայերեն, անգլերեն, գերմաներեն և ռուսերեն բովանդակությամբ, որը աջակցում էր Ռուսաստանին և քննադատում Ուկրաինային ու Միացյալ Նահանգներին, ինչպես նաև 25 ալիք՝ Ադրբեջանի հետ կապվող համակարգված ազդեցության գործողությունների վերաբերյալ հետաքննության շրջանակում, որոնց բովանդակությունը քննադատում էր Հայաստանը: «Meta»-ի՝ 2026 թվականի առաջին եռամսյակի հաշվետվության համաձայն, ընկերությունը խափանել է «Ruposters»-ին բարձր հավանականությամբ վերագրվող համակարգված ոչ իսկական վարքագծի ցանցը և միջոցներ է ձեռնարկել 52 «Facebook» հաշվի, 134 էջի և 35 «Instagram» հաշվի նկատմամբ: Ցանցը թիրախավորում էր շուրջ 20 երկրի լսարաններ, այդ թվում՝ Հայաստանի, ուներ ընդհանուր առմամբ ավելի քան 274 000 հետևորդ և գովազդի վրա ծախսել էր շուրջ 49 000 ԱՄՆ դոլար:

59 Իշխանությունները ԺՀՄԻԳ ԸԴԱ-ին տեղեկացրել են, որ քարոզարշավի ընթացքում հայտնաբերել են ապատեղեկատվություն պարունակող մի շարք հրապարակումներ, որոնք հիմնականում վերագրվել են Ռուսաստանի Դաշնության հետ կապվող գործող անձանց, ինչպես նաև առանձնացրել են կայքեր, որոնք, հավանաբար, առնչվում են նույն ցանցերին: Առնվազն երկու դեպքում իշխանությունները «Meta»-ին տեղեկացրել են համակարգված ոչ իսկական վարքագծի (co-ordinated inauthentic behaviour) գործունեության մասին, ինչից հետո «Meta»-ն միջոցներ է ձեռնարկել համապատասխան հաշիվների նկատմամբ:

60 Տեխնիկական և փորձագիտական աջակցությունը կենտրոնացած էր ապօրինի ֆինանսական հոսքերի, կիբեռսպառնալիքների, ինչպես նաև օտարերկրյա տեղեկատվական մանիպուլյացիայի և միջամտության դեմ պայքարի վրա և տրամադրվում էր մի շարք կառույցների, այդ թվում՝ Հայաստանի տեղեկատվական համակարգերի գործակալությանը (ՀՏՀԳ) և վարչապետի աշխատակազմին:

պետական ջանքերի թափանցիկությունը և արդյունավետությունը:[61] Քաղաքացիական հասարակությունը և լրատվամիջոցները նպաստել են կեղծ տեղեկությունների հերքմանը, այդ թվում՝ ընտրությունների համար լրատվամիջոցների կողմից ստեղծված համատեղ խմբագրության միջոցով:[62]

Քարոզարշավի ֆինանսավորումը

Նախընտրական քարոզչության ֆինանսավորումը կարգավորվում է Ընտրական օրենսգրքով և «Կուսակցությունների մասին» ՀՀ օրենքով: 2021 և 2024 թվականներին ընդունված փոփոխություններով բարձրացվել են նվիրատվությունների և ծախսերի սահմանաչափերը, ինչպես նաև վերաբաշխվել են վերահսկողական լիազորությունները: Նախընտրական ծախսերի սահմանումը ընդլայնվել է՝ ներառելով նաև կազմակերպչական ծախսերը, ինչպիսիք են գրասենյակային տարածքի, տրանսպորտի, կապի միջոցների և նախընտրական շտաբի աշխատակիցների հետ կապված ծախսերը՝ մասամբ ի կատար ածելով ԺՀՄԻԳ-ի և Վենետիկի հանձնաժողովի նախկինում ներկայացված առաջարկություններից մեկը: Սակայն, ի հակադրություն ԺՀՄԻԳ-ի կողմից նախկինում ներկայացված առաջարկություններից մեկի, պաշտոնական քարոզարշավի մեկնարկից առաջ կատարված ծախսերը շարունակում են չհայտարագրվել և չեն հաշվարկվում ծախսերի սահմանաչափի մեջ: Բացի այդ, կարգավորող շրջանակում և դրա կիրառման գործընթացում շարունակում են առկա մնալ բացեր, որոնք խաթարում են կուսակցությունների և նախընտրական քարոզչության ֆինանսավորման թափանցիկությունը, հաշվետվողականությունը և ամբողջականությունը:

Չորս խորհրդարանական կուսակցություններ և դաշինքներ ստացել են տարեկան պետական ֆինանսավորում՝ հիմնված 2021 թվականի ընտրություններում իրենց արձանագրած արդյունքների վրա: Կուսակցությունների (կուսակցությունների դաշինքերի) համար հատուկ պետական ֆինանսավորում չի տրամադրվում, ինչը կարող է մեծացնել նրանց կախվածությունը խոշոր մասնավոր նվիրատվություններից և ֆինանսավորման այլ մասնավոր աղբյուրներից:[63] Յուրաքանչյուր ընտրող կարող է տարեկան մինչև 10 միլիոն ՀՀ դրամ (23 300 եվրո) նվիրաբերել կուսակցությանը, այդ թվում՝ կանխիկ մուտքերի միջոցով, ինչը չի ապահովում միջոցների հետագծելիության հնարավորությունը: ԺՀՄԻԳ ԸԴԱ-ի մի շարք զրուցակիցներ մտահոգություն են հայտնել, որ 2025 թվականին կատարված և 2026 թվականին բացահայտված որոշ նվիրատվություններ, ըստ երևույթին, արտացոլում են համակարգված նվիրատվությունների

---

61 Քարոզարշավի ընթացքում կառավարության «Facebook» էջում հերքվել է ընդամենը մեկ կեղծ պնդում, որով հերքվել է այն մեղադրանքը, թե կառավարությունը ծրագրում է վնասել «Ուժեղ Հայաստան»-ին ՝ ընտրակաշառքի վերաբերյալ կեղծ աուդիոձայնագրությունների միջոցով: 2024 թվականի Վենետիկի հանձնաժողովի՝ «Ընտրական հարցերում լավ փորձի կանոնագրքի» թվային տեխնոլոգիաներին և արհեստական բանականությանը վերաբերող մեկնաբանական հռչակագրի 12-14-րդ պարբերությունների, ինչպես նաև այդ հռչակագրի բացատրական զեկույցի II.3 բաժնի համաձայն՝ պետությունը պարտավոր է ձեռնարկել արդյունավետ միջոցներ՝ ամուր հանրային բանավեճի համար նպաստավոր միջավայր ապահովելու, ընտրողների՝ սեփական կարծիք ձևավորելու ազատության խախտումները կանխելու և պատժելու, ինչպես նաև կազմակերպված տեղեկատվական խաթարման արշավների առաջացրած մարտահրավերներին արձագանքելու նպատակով, քանի որ դրանք կարող են վտանգել ընտրական գործընթացների ամբողջականությունը: Այդ միջոցառումները կարող են ներառել պետական կարգավորում, ինչպես նաև բավարար ռեսուրսներով և լիազորություններով օժտված անկախ մարմնի գործունեություն, որը կկարողանա արդյունավետորեն իրականացնել իր մանդատը և գործել արագ ու ժամանակին:

62 Փաստացի խմբագրության կազմում ընդգրկված էին «Հետք», «CivilNet», «Factor TV», «media.am» և «Ampop Media» լրատվամիջոցների ներկայացուցիչները, որոնք հրապարակել են ապատեղեկատվական նարատիվներին առնչվող ավելի քան 60 փաստերի ստուգման և հետաքննական հոդվածներ:

63 2021 թվականից ի վեր չորս կուսակցություն ստացել է տարեկան պետական ֆինանսավորում՝ ընդհանուր 520 միլիոն ՀՀ դրամի (1,21 միլիոն եվրո) չափով. «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունը ստացել է 268 միլիոն ՀՀ դրամ (623 300 եվրո), «Հայաստան» դաշինքը՝ 163 միլիոն ՀՀ դրամ (379 100 եվրո), «Բարգավաճ Հայաստան» կուսակցությունը՝ 50 միլիոն ՀՀ դրամ (116 300 եվրո), իսկ «Հանրապետություն» կուսակցությունը՝ 38 միլիոն ՀՀ դրամ (88 400 եվրո): 1 եվրոն հավասար է 430 ՀՀ դրամի:

ավելի լայն միտում, այդ թվում՝ նույն հաստատությունների աշխատակիցների կողմից կատարված նվիրատվությունների միջոցով:[64] Թեև իրավաբանական անձանց, օտարերկրյա և անանուն աղբյուրներից կատարվող նվիրատվություններն արգելված են, իշխող կուսակցության քաղաքականությունը խթանող մի շարք թանկարժեք միջոցառումներ բացահայտորեն հովանավորվել են խոշոր ընկերությունների կողմից, ինչը մտահոգություններ է առաջացրել սերտաճված բիզնես և քաղաքական շահերի կապակցությամբ:[65]

Կուսակցությունը կարող է մինչև 800 միլիոն ՀՀ դրամ (1,86 միլիոն եվրո) փոխանցել իր նախընտրական հիմնադրամի հաշվին, որը միաժամանակ հանդիսանում է նաև ծախսերի առավելագույն սահմանաչափը: ԺՀՄԻԳ ԸԴԱ-ն արձանագրել է պաշտոնական քարոզարշավի մեկնարկից առաջ կատարված զգալի ծախսեր, այդ թվում՝ նախընտրական շտաբերի տարածքների և թանկարժեք միջոցառումների հետ կապված, որոնք չեն հաշվարկվել ծախսերի սահմանաչափի մեջ: Երրորդ կողմերի կողմից իրականացվող քարոզչությունը կարգավորված չէ, և տարբեր քաղաքացիական հասարակության կազմակերպություններ, լրատվամիջոցներ և ազդեցիկ անձինք առանց իրենց ֆինանսավորման աղբյուրների բացահայտման պահանջի ներգրավված են եղել քարոզչությանը վերաբերող գործունեության մեջ: Նախընտրական ֆինանսավորման հաշվետվությունների ներկայացման պահանջները տարածվում են նաև առցանց քարոզչության ծախսերի վրա: Այնուամենայնիվ, երրորդ կողմերի հաշիվների միջոցով իրականացվել է լայնածավալ առցանց քարոզչություն՝ առանց ֆինանսավորման աղբյուրների վերաբերյալ թափանցիկության (տե՛ս նաև «*Ընտրական քարոզարշավ*» բաժինը): [66] Թեև ընտրությունների նշանակումից հետո բարեգործական գործունեությունն արգելվում է, իշխող կուսակցության հետ փոխկապակցված որոշ հիմնադրամներ շարունակել են իրենց գործունեությունը, այդ թվում՝ քարոզարշավի ընթացքում, մինչդեռ ընդդիմադիր կուսակցությունների հետ փոխկապակցված որոշ հիմնադրամների նկատմամբ հարուցվել են քննություններ:[67]

---

64 2024 թվականին ընդունված օրենսդրական փոփոխությամբ պահանջվում է, որ բոլոր նվիրատվությունները կատարվեն կուսակցությունների հաշիվներին, այլ ոչ թե նախընտրական հիմնադրամների հաշիվներին, ինչը հնարավորություն է տալիս համախմբել նույն նվիրատուի կողմից կատարված նվիրատվությունները: Սակայն նվիրատուների անունները հրապարակվում են միայն ընտրությունների հաջորդող տարում:

65 Ապրիլի 19-ին Գյումրիում և ապրիլի 25-ին Երևանում անցկացվել են լայնամասշտաբ «Խաղաղության ձայնը» խորագրով համերգներ, որոնց ուղերձները համահունչ էին «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության նախընտրական կարգախոսին՝ «Տեր կանգնիր խաղաղությանը»: Վարչապետը մասնակցել և ելույթ է ունեցել Գյումրիի համերգին, որը լայնորեն ընկալվել է որպես կուսակցության նախընտրական քարոզարշավի մեկնարկային միջոցառում: Երկու համերգներն էլ հովանավորվել են «Fast Bank»-ի կողմից: «Անկախ դիտորդ» ՀԿ դաշինքը բողոք է ներկայացրել Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով (ԿԿՀ)՝ պնդելով, որ տեղի է ունեցել նախընտրական քարոզչության ապօրինի ֆինանսավորում: «Ականատես» դիտորդական առաքելության տվյալներով՝ կուսակցության նախընտրական տարբերանշանը և կարգախոսը օգտագործվել են նաև 2026 թվականի ամանորյա միջոցառման ընթացքում, որը ևս ֆինանսավորվել է «Fast Bank»-ի կողմից:

66 «Meta» գովազդների գրադարանի (Meta Ad Library) տվյալների հիման վրա՝ նախընտրական քարոզարշավի ընթացքում քաղաքական գովազդների վրա կատարված ծախսերը կազմել են շուրջ 815 000 եվրո, որից «Ուժեղ Հայաստան»-ը ծախսել է 260,000 եվրո, «Հայաստան» դաշինքը՝ շուրջ 70 000 եվրո, «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունը՝ շուրջ 60 000 եվրո, «Միասնության թևեր»-ը՝ շուրջ 16 000 եվրո, իսկ «Լուսավոր Հայաստան»-ը՝ 13 000 եվրո: Նախընտրական գովազդներ են տեղադրվել նաև «Google»-ում, «YouTube»-ում և այլ առցանց հարթակներում՝ առանց հովանավորության վերաբերյալ տեղեկատվության բացահայտման:

67 Պարոն Փաշինյանի տիկնոջ գլխավորած «Իմ քայլը» հիմնադրամը, որը կրում է ներկայիս իշխող կուսակցության նախկին խորհրդարանական խմբակցության անվանումը, չի համարվել կուսակցության հետ փոխկապակցված կազմակերպություն: Ի տարբերություն դրա՝ Հակակոռուպցիոն կոմիտեն (ՀԿԿ) հայտարարել է, որ քննություն է իրականացրել «Ուժեղ Հայաստան»-ի և դրա հետ փոխկապակցված «Մեր ձևով» հիմնադրամի տասնյակ աշխատակիցների նկատմամբ՝ այն հիմքով, որ նրանց աշխատավարձերը հանդիսացել են «քողարկված ընտրակաշառք»: Հունիսի 2-ին «Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» ՀԿ-ն Վարչական դատարան է ներկայացրել 13 բողոք՝ կապված «Իմ քայլը» հիմնադրամի գործադիր տնօրենի կողմից նախընտրական ժամանակահատվածում բարեգործական գործունեության արգելքի ենթադրյալ խախտումների վերաբերյալ:

ԿԸՀ-ի վերահսկիչ-վերստուգիչ ծառայությունը (ՎՎԾ) վերահսկում է նախընտրական ֆինանսավորումը, իսկ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը (ԿԿՀ)՝ կուսակցությունների կանոնավոր ֆինանսավորումը: Մայիսի 8-ից սկսած՝ յուրաքանչյուր երեք օրը մեկ ԿԿՀ-ն և ՎՎԾ-ն ստանում էին կուսակցությունների եկամուտների և նախընտրական ծախսերի վերաբերյալ բանկային քաղվածքներ: Օրենքի պահանջի համաձայն՝ բոլոր կուսակցությունները (կուսակցությունների դաշինքները) մայիսի 17-ին և 27-ին նախընտրական ֆինանսավորման հաշվետվություններ են ներկայացրել ԿԸՀ-ի վերահսկիչ-վերստուգիչ ծառայությանը: [68] ՎՎԾ-ն և ԿԿՀ-ն հրապարակել են յուրաքանչյուր կուսակցության (կուսակցության դաշինքի) ընդհանուր եկամուտները և ծախսերը, ինչպես նաև նրանց կողմից ներկայացված հաշվետվությունները, սակայն այդ տեղեկատվությունը օգտագործողի համար որոնելի ձևաչափով հասանելի չի եղել, ինչը սահմանափակել է հանրային վերահսկողության հնարավորությունները: Նախընտրական ֆինանսավորման վերջնական հաշվետվությունները պետք է ներկայացվեն մինչև հունիսի 11-ը և հրապարակվեն ՎՎԾ-ի եզրակացությունների հետ միասին՝ ոչ ուշ, քան ընտրությունների վերջնական արդյունքների հրապարակումից մեկ օր առաջ: Խախտումների համար նախատեսված պատասխանատվության միջոցները ներառում են տուգանքներ, ազատազրկում և կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) գրանցման ուժը կորցրած ճանաչում: Ընտրված նվիրատուների եկամուտները և գույքը ստուգելուց հետո ԿԿՀ-ն 7 քաղաքական կուսակցությունների 100-ից ավել նվիրատուների անունները փոխանցել է Հակակոռուպցիոն կոմիտե (ՀԿԿ)՝ հետաքննություն իրականացնելու նպատակով: Օրենսդրությամբ սահմանված և օբյեկտիվ չափանիշների բացակայության պայմաններում նշված դեպքերի ընտրությունը, առաջացրել է մտահոգություններ է ընտրողի և քաղաքական շարժառիթներով պայմանավորված մոտեցման հնարավորության վերաբերյալ:

Զանգվածային լրատվամիջոցներ

Լրատվական միջավայրը բազմակարծիք է, սակայն շարունակում է մնալ բևեռացված և սահմանափակված՝ գովազդային շուկայի կրճատման և դրա նեղ կենտրոնացվածության պատճառով, ինչը խաթարում է լրատվամիջոցների ֆինանսական կայունությունը և դրանք խոցելի է դարձնում քաղաքական ազդեցության նկատմամբ: 2025 թվականին ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության (USAID) կողմից անկուսակցական լրատվամիջոցներին և քաղաքացիական հասարակության կազմակերպություններին տրամադրվող աջակցության դադարեցումն ավելի է խորացրել այս մարտահրավերները, մինչդեռ լրատվամիջոցների սեփականատերերի վերաբերյալ թափանցիկության պակասի շուրջ մտահոգությունները շարունակում են պահպանվել: Լրատվամիջոցների բազմազանությունը էլ ավելի է նվազել այն բանից հետո, երբ ընդդիմության հետ փոխկապակցված *«Հ2»-ը* և *«Երկիր Մեդիա»-ն* 2021-2023 թվականներին կորցրեցին վերգետնյա եթերային հեռարձակման իրավունքը, իսկ Հայ Առաքելական Եկեղեցու հետ փոխկապակցված *«Շողակաթ»* հեռուստաընկերությունը վերջերս փակվեց: Հայաստանի հանրային հեռարձակողը շարունակում է պահպանել գերիշխող դիրքը հեռարձակման ոլորտում՝ օգտվելով պետական կայուն ֆինանսավորումից և միաժամանակ ստանալով զգալի եկամուտներ կոմերցիոն գովազդից:

---

68 Մայիսի 27-ի դրությամբ ամենաբարձր եկամուտները և ծախսերը հայտարարած ընտրական գործընթացի մասնակիցներն էին՝ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունը՝ 600 միլիոն ՀՀ դրամ (1 395 300 եվրո), «Ուժեղ Հայաստան»-ը՝ 400 միլիոն ՀՀ դրամ (930 200 եվրո), «Հայաստան» դաշինքը՝ 300 միլիոն ՀՀ դրամ (697 700 եվրո) և «Բարգավաճ Հայաստան» կուսակցությունը՝ 90 միլիոն ՀՀ դրամ (209 300 եվրո): ԿԿՀ-ի տվյալների համաձայն՝ մայիսի 6-ից 27-ն ընկած ժամանակահատվածում «Ուժեղ Հայաստան»-ը 325 նվիրատուներից ստացել է 604 միլիոն ՀՀ դրամ (1 404 700 եվրո), «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունը՝ 715 նվիրատուներից 391 միլիոն ՀՀ դրամ (909 300 եվրո), «Հայաստան» դաշինքը՝ 65 նվիրատուներից 153 միլիոն ՀՀ դրամ (355 800 եվրո), «Բարգավաճ Հայաստան» կուսակցությունը՝ 52 նվիրատուներից 95 միլիոն ՀՀ դրամ (220 900 եվրո), իսկ «Միասնության թևեր»-ը՝ 23 նվիրատուներից 66 միլիոն ՀՀ դրամ (153 500 եվրո):

Սահմանադրությունը երաշխավորում է արտահայտվելու ազատությունը և լրատվամիջոցների ազատությունը: Թեև զրպարտությունը և վիրավորանքը ապաքրեականացվել են, ԺՀՄԻԳ ԸԴԱ-ի բազմաթիվ զրուցակիցներ մտահոգություն են հայտնել քաղաքացիական կարգով զրպարտության վերաբերյալ հայցերի աճող թվի կապակցությամբ, որոնք հիմնականում ներկայացվում են բարձրաստիճան պետական պաշտոնատար անձանց կողմից: [69] Վերջին շրջանում առցանց լրատվամիջոցների և մի շարք բլոգերների նկատմամբ ներկայացվել են խուլիգանության հոդվածով քրեական մեղադրանքներ՝ բարձրաստիճան պետական պաշտոնյաների նկատմամբ վիրավորական բովանդակության համար, ինչը հանգեցրել է մինչդատական կալանքների, իսկ մեկ դեպքում՝ նաև տեսանյութերի մոնտաժման սարքավորումների խուզարկության և առգրավման: [70] Լրագրողները իրենց մասնագիտական գործունեության ընթացքում բախվել են նաև բանավոր հարձակումների, սպառնալիքների, ինչպես նաև գործունեության խոչընդոտման և ճնշման այլ ձևերի, ինչը լրացուցիչ սահմանափակումներ է ստեղծում քաղաքական թեմաների լուսաբանման համար:

ԺՀՄԻԳ ԸԴԱ-ի կողմից իրականացված լրատվամիջոցների մշտադիտարկումը ցույց է տվել, որ մշտադիտարկում անցած լրատվամիջոցների մեծ մասը կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) կողմից օգտագործվել է փոխադարձ վիրավորանքների և պառակտող նախընտրական հռետորաբանության տարածման համար (տե՛ս նաև «*Ընտրական քարոզարշավ*» բաժինը)՝ քիչ ուշադրություն դարձնելով ընտրական մրցակիցների ծրագրերի և դրանց բովանդակային վերլուծությանը, ինչի հետևանքով սահմանափակվել է ընտրողների՝ տեղեկացված ընտրություն կատարելու հնարավորությունը: [71] Թեև հանրային հեռուստատեսությունը և մշտադիտարկում անցած որոշ մասնավոր լրատվամիջոցներ ցուցաբերել են ակնհայտ կողմնակալություն հօգուտ որոշակի քաղաքական ուժերի, ԺՀՄԻԳ ԸԴԱ-ի կողմից մշտադիտարկված այլ մասնավոր լրատվամիջոցները հիմնականում կենտրոնացել են նախընտրական միջոցառումների լուսաբանման վրա և հաճախ հեռարձակել են կուսակցությունների կողմից տրամադրված տեսանյութեր՝ սահմանափակ փաստական

---

69 «Խոսքի ազատության պաշտպանության կոմիտեի» 2025 թվականի տարեկան զեկույցի համաձայն՝ 2025 թվականին լրագրողների և լրատվամիջոցների դեմ ներկայացվել է զրպարտության վերաբերյալ 61 դատական հայց, մինչդեռ 2024 թվականին դրանց թիվը կազմել էր 43: Նման հայցերի մեծ մասը ներկայացվել է բարձրաստիճան պետական պաշտոնատար անձանց կողմից, այդ թվում՝ վարչապետի և Ազգային ժողովի նախագահի կողմից:

70 2025 թվականի նոյեմբերի 13-ին Ազգային անվտանգության ծառայությունը ձերբակալել է «AntiFake.am» փողքաթի համահաղորդավարներին՝ խուլիգանության մեղադրանքով, որը բխում էր փողքաթի թողարկումներից և «Facebook»-ում կատարված հրապարակումներից՝ ի պատասխան Ազգային ժողովի նախագահի կողմից արված հայհոյախառն գրառումների: Երկու համահաղորդավարների նկատմամբ կիրառվել է նախնական կալանք, որը հետագայում փոխարինվել է վարչական հսկողությամբ: Նրանց նկատմամբ կիրառվել էին նմանատիպ մեղադրանքներ նաև 2024 թվականի մարտին՝ վարչապետի վերաբերյալ արված մեկնաբանությունների կապակցությամբ, սակայն 2025 թվականի մայիսին նշված անձինք արդարացվել էին: «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի» (ՔՔԻՄԴ) վերաբերյալ թիվ 34 Ընդհանուր մեկնաբանության 38-րդ պարբերությունում նշվում է, որ «արտահայտման որևէ ձևի՝ հանրային գործչի համար վիրավորական համարվելու հանգամանքը ինքնին բավարար հիմք չէ պատժամիջոցների կիրառումն արդարացնելու համար»: Նույն փաստաթղթի 9-րդ պարբերությունում նաև նշվում է, որ «անձի նկատմամբ հետապնդումը, ահաբեկումը կամ խարանավորումը, այդ թվում՝ նրա ձերբակալումը, կալանավորումը, դատավարության ենթարկումը կամ ազատազրկումը՝ նրա ունեցած կարծիքների պատճառով, հանդիսանում է 19-րդ հոդվածի 1-ին կետի խախտում»:

71 Պաշտոնական նախընտրական քարոզարշավի ընթացքում ԺՀՄԻԳ ԸԴԱ-ն մշտադիտարկել է համապետական հեռուստալիքների՝ «Հ1» (հանրային հեռուստատեսություն), «ATV», «Արմենիա TV», «Կենտրոն» և «Շանթ» հեռուստաընկերությունների, ինչպես նաև Երևանում գործող «FreeNews», «Հ2» և «Երկիր Մեդիա» հեռուստաընկերությունների՝ դիտման առավել բարձր վարկանիշ ունեցող ժամերին (18:00-00:00) հեռարձակվող ծրագրերը: ԺՀՄԻԳ ԸԴԱ-ն մշտադիտարկել է նաև քաղաքական թեմաներին վերաբերող հոդվածները, որոնք հրապարակվել են *armtimes*, *azatutyun* (Ազատ Եվրոպա/Ազատություն ռադիոկայանի հայկական ծառայություն), *civilnet*, *news.am* և *panorama* առցանց լրատվամիջոցներում:

խմբագրական մեկնաբանություններով, ինչի հետևանքով չեն ապահովել ընտրարշավի ընթացքում անկողմնակալ տեղեկատվություն տրամադրելու վերաբերյալ օրենքի պահանջի լիարժեք կատարումը:

Ի հակադրություն իր իրավական պարտավորությունների և հանրային առաքելության՝ Հայաստանի հանրային հեռարձակողը «Հ1»-ի լրատվական թողարկումներում ցուցաբերել է ակնհայտ կողմնակալություն իշխող կուսակցության օգտին և բացասական երանգներով է լուսաբանել հիմնական ընդդիմադիր կուսակցություններին (կուսակցությունների դաշինքներին): «Հ1»-ը իր լուսաբանման 14 տոկոսը հատկացրել է «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությանը՝ հիմնականում դրական երանգավորմամբ, մինչդեռ «Ուժեղ Հայաստան», «Հայաստան» դաշինք և «Բարգավաճ Հայաստան» քաղաքական ուժերը ստացել են համապատասխանաբար՝ 17, 11 և 10 տոկոս լուսաբանում՝ հիմնականում բացասական երանգավորմամբ: Նմանատիպ միտումներ արձանագրվել են նաև «FreeNews» հեռուստաընկերության և «Armtimes» կայքի դեպքում:[72] Ի հակադրություն «Կենտրոն», «Հ2» և «Երկիր Մեդիա» հեռուստաընկերությունները, ինչպես նաև «news.am» և «panorama.am» կայքերը հետևողականորեն ներկայացրել են կառավարությանը և «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությանը բացասական լույսի ներքո՝ բարենպաստ լուսաբանելով ընտրված կուսակցություններին (կուսակցությունների դաշինքներին): [73]

«ATV», *«Արմենիա TV»* և *«Շանթ»* հեռուստաընկերությունների լրատվական թողարկումները մեծապես հիմնվել են քաղաքական կուսակցությունների կողմից տրամադրված տեսանյութերի վրա, որոնք գրեթե չեն համալրվել փաստական խմբագրական մեկնաբանություններով: [74] *«CivilNet»*-ը տարբերվել է այս մոտեցումից՝ հիմնականում կենտրոնանալով «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության և «Ուժեղ Հայաստան»-ի վրա՝ երկուսին էլ տրամադրելով համադրելի և հիմնականում չեզոք լուսաբանում: «Ազատություն» կայքը ավելի քննադատական է եղել «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության նկատմամբ և, ավելի փոքր չափով, նաև «Ուժեղ Հայաստան», «Հայաստան» դաշինք և «Բարգավաճ Հայաստան» քաղաքական ուժերի նկատմամբ:

Հանրային հեռուստատեսությունը կատարել է օրենքով սահմանված իր պարտավորությունը՝ յուրաքանչյուր ընտրական մրցակցի տրամադրելով 90 րոպե անվճար եթերաժամ, որը ԿԸՀ-ն բաշխել է ամենօրյա եթերաշրջանների տեսքով՝ դիտման առավել բարձր վարկանիշ ունեցող ժամերին: Լիցենզավորված մասնավոր հեռարձակողների մեծ մասը նույնպես կուսակցություններին (կուսակցությունների դաշինքներին) տրամադրել է օրենքով նախատեսված 25 րոպե անվճար եթերաժամ, որը, որպես կանոն, տրամադրվել է դիտման առավել

---

72 *«FreeNews»* հեռուստաընկերությունը և *«Armtimes»* կայքը իրենց լուսաբանման համապատասխանաբար 19 և 32 տոկոսը հատկացրել են «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությանը՝ հիմնականում դրական երանգավորմամբ, մինչդեռ հիմնական ընդդիմադիր ընտրական մրցակիցներին լուսաբանել են առավելապես բացասական երանգավորմամբ:

73 «Կենտրոն» հեռուստաընկերությունն իր լուսաբանման 24 տոկոսը հատկացրել է «Բարգավաճ Հայաստան» կուսակցությանը, իսկ «Երկիր Մեդիա»-ն՝ 13 տոկոսը «Հայաստան» դաշինքին, իսկ «Panorama»-ն՝ 20 տոկոսը «Ուժեղ Հայաստան»-ին՝ հիմնականում դրական երանգավորմամբ: «Հ2»-ը և «news.am»-ը իրենց լուսաբանման համապատասխանաբար 12-13 տոկոսը հատկացրել են «Ուժեղ Հայաստան»-ին և «Հայաստան» դաշինքին՝ հիմնականում դրական երանգավորմամբ: «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունը ստացել է լուսաբանման 10 տոկոսը «Կենտրոն»-ում, 13 տոկոսը «Երկիր Մեդիա»-ում, 18 տոկոսը «Հ2»-ում, 21 տոկոսը «news.am»-ում և 24 տոկոսը «Panorama»-ում, ընդ որում լուսաբանման գերակշիռ մասը կրել է բացասական բնույթ:

74 «ATV»-ն, «Արմենիա TV»-ն և «Շանթ»-ը իրենց լուսաբանման 16-20 տոկոսը հատկացրել են «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությանը, 15-19 տոկոսը՝ «Ուժեղ Հայաստան»-ին, 6-13 տոկոսը՝ «Հայաստան» դաշինքին, և 4-8 տոկոսը՝ «Բարգավաճ Հայաստան» կուսակցությանը, մինչդեռ մյուս ընտրական գործընթացի մասնակիցները ստացել են մինչև 4 տոկոս լուսաբանում:

բարձր վարկանիշ ունեցող ժամերից դուրս: 75 Հավասար պայմաններով հասանելի վճարովի եթերաժամը հիմնականում ձեռք է բերել «Ուժեղ Հայաստան»-ը, որին հաջորդել են «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունը և «Բարգավաճ Հայաստան» կուսակցությունը, և, ավելի փոքր չափով, «Հայաստան» դաշինքը: Մշտադիտարկված հեռարձակողների մեծ մասը կազմակերպել է նաև անհատական հարցազրույցներ կուսակցությունների ներկայացուցիչների հետ, ինչը կուսակցություններին (կուսակցությունների դաշինքներին) լրացուցիչ հնարավորություն է տվել ներկայացնելու իրենց տեսակետները: Հանրային հեռուստատեսությունը կազմակերպել էր երեք բանավեճ, որոնք բաց էին ընտրական գործընթացի բոլոր մասնակիցների համար, սակայն ոչ բոլոր քաղաքական ուժերն են որոշել մասնակցել: Քննարկումները հաճախ կրում էին առճակատային բնույթ, ինչը մեծապես պայմանավորված էր «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ներկայացուցիչների վարքագծով:

Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը (ՀՌՀ) վերահսկում է հեռարձակվող լրատվամիջոցների կողմից օրենսդրության պահանջների պահպանումը և պարբերական հիմունքներով մշտադիտարկել է 41 հեռարձակողի, այդ թվում՝ որոշ կաբելային հեռուստաընկերությունների գործունեությունը: Թեև ՀՌՀ-ն մշտադիտարկում էր հանրային հեռարձակողի գործունեությունը, այն նրա նկատմամբ պատժամիջոցներ կիրառելու լիազորություն չունի: Իր մշտադիտարկման արդյունքների հիման վրա ՀՌՀ-ն մայիսի 27-ին պաշտոնապես հիշեցրել է հանրային հեռարձակողին կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) նկատմամբ անկողմնակալ և չեզոք լուսաբանում ապահովելու իր պարտավորության մասին: ՀՌՀ-ն սեփական նախաձեռնությամբ հարուցել է 5 վարչական վարույթ, իսկ բողոքների հիման վրա՝ ևս 2 վարույթ, որոնք հիմնականում վերաբերում էին նախընտրական հաղորդումների ընդհատմանը գովազդներով կամ անվճար եթերաժամ չտրամադրելուն: Այն նաև վարույթ է հարուցել *«Հ2»*-ի նկատմամբ՝ կուսակցությունների վերաբերյալ նորությունների անկողմնակալ լուսաբանում չապահովելու համար, և *«TV5»*-ի նկատմամբ՝ «Հայաստան» դաշինքի նույնականացում չանցած գովազդի կապակցությամբ, որը, ՀՌՀ-ի գնահատմամբ, պարունակում էր անչափահասների համար վնասակար բովանդակություն: 76 ՀՌՀ-ի կողմից իրականացվող վերահսկողությունը որոշ դեպքերում նպաստել է արագ արձագանքմանը և իրավական պաշտպանության միջոցների կիրառմանը, այդ թվում՝ անվճար եթերաժամի հասանելիության հարցում: Այնուամենայնիվ, ոչ մի պաշտոնական նախազգուշացման չի հետևել սահմանված պահանջների պատշաճ կատարում: Մշտադիտարկման ոչ համակարգային բնույթի պատճառով գովազդի և նորությունների անկողմնակալության վերաբերյալ հարուցված վարույթները թողել են ընտրողի տպավորություն և հետևողականորեն չեն անդրադարձել այլ հեռարձակողների կողմից թույլ տրված համանման խախտումներին:

---

75 Մայիսի 14-ին «Լուսավոր Հայաստան» և «Նոր ուժ» կուսակցությունները բողոքներ են ներկայացրել Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողով (ՀՌՀ)՝ պնդելով, որ «*Արմենիա TV*», «*ATV*» և «*Fastsports*» հեռուստաընկերությունները չեն տրամադրել իրենց օրենքով նախատեսված անվճար եթերաժամը: Մայիսի 27-ին ՀՌՀ-ն մերժել է *«Արմենիա TV»-ի* և «*ATV»-ի* դեմ ներկայացված բողոքները, քանի որ այդ հեռարձակողները հետագայում սկսել են տրամադրել համապատասխան եթերաժամը: Հունիսի 1-ին ՀՌՀ-ն *«Fastsports»* հեռուստաընկերությանը պաշտոնական նախազգուշացում է տվել:

76 Արհեստական բանականությամբ ստեղծված գովազդային հոլովակում ներկայացվել է ենթադրական սցենար, ըստ որի՝ Հայաստանը կդառնա «Արևմտյան Ադրբեջան», եթե «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունը շարունակի մնալ իշխանության: Հոլովակում «Մայր Հայաստան» հուշարձանի փոխարեն պատկերված էր Մուստաֆա Քեմալ Աթաթուրքի հուշարձանը, ինչը, Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի (ՀՌՀ) գնահատմամբ, «վարկաբեկում կամ նսեմացնում էր ազգային մշակութային ժառանգությունը», և, հետևաբար, կարող էր հեռարձակվել միայն 00:00-ից 06:00-ն ընկած ժամանակահատվածում: ԺՀՄԻԳ ԸԴԱ-ի լրատվամիջոցների մշտադիտարկման արդյունքում նույնատիպի գովազդ հայտնաբերվել է նաև մի շարք այլ հեռարձակողների եթերում, սակայն ՀՌՀ-ն այդ կապակցությամբ վարույթ չի հարուցել:

Ընտրական վեճերի լուծման կարգը

Ընտրական վեճերի վերաբերյալ իրավական շրջանակը նախորդ ընտրություններից ի վեր մնացել է անփոփոխ և նախատեսում է վարչական կարգով վերանայում ընտրական հանձնաժողովների կողմից, ինչպես նաև դատական բողոքարկում Վարչական դատարանում, որի որոշումները վերջնական են: Բողոքներ ներկայացնելու իրավունքը, մեծ մասամբ, սահմանափակվում է այն անձանցով, որոնց ընտրական իրավունքները անմիջականորեն տուժում են, ինչը հակասում է ԺՀՄԻԳ-ի և Վենետիկի հանձնաժողովի կողմից նախկինում ներկայացված առաջարկություններին: [77] Բողոքները և դիմումները պետք է քննվեն երեքից հինգ օրվա ընթացքում, իսկ դեպքերի մեծ մասում՝ մինչև քվեարկության օրը: Վարչական դատարանը միակ ատյանն է, որը ԿԸՀ-ի դիմումի հիման վրա որոշում է կայացնում որոշակի խախտումների համար թեկնածուների գրանցումն ուժը կորցրած ճանաչելու վերաբերյալ, ընդ որում այդ որոշումների բողոքարկման հնարավորություն նախատեսված չէ, ինչը հակասում է միջազգային լավագույն փորձին: [78] ԱԺ ընտրությունների արդյունքներով ընդունված ԿԸՀ-ի վերջնական որոշումը կարող է բողոքարկվել Սահմանադրական դատարանում:

Ընտրական ժամանակահատվածում ընտրատարածքային ընտրական հանձնաժողովներ (ԸԸՀ) պաշտոնական բողոքներ չեն ներկայացվել: ԿԸՀ-ն հրապարակային նիստերի ընթացքում, թափանցիկ ընթացակարգով, քննել է հինգ պաշտոնական բողոք, որոնցից երկուսը վերաբերում էին դիտորդների անկողմնակալությանը, երկուսը՝ ընտրություններին մասնակցելու համար կուսակցության գրանցմանը, իսկ մեկը՝ քաղաքական մրցակցի նկատմամբ ատելության հրահրման վերաբերյալ պնդումներին: Բոլոր բողոքները մերժվել են: Մեկ գործ բողոքարկվել է, սակայն բողոքը մերժվել է: Բացի այդ, ԿԸՀ-ն տեղեկացրել է ԺՀՄԻԳ ԸԴԱ-ին, որ փետրվարից ի վեր ստացել է ավելի քան 600 ծանուցում և դիմում, այդ թվում՝ 40 դիմում ենթադրյալ նախընտրական և նախընտրական ֆինանսավորման խախտումների, ինչպես նաև այլ վարչական իրավախախտումների վերաբերյալ: Դրանք, որպես կանոն, փոխանցվել են իրավասու մարմիններին կամ մերժվել, քանի որ գտնվել են ԿԸՀ-ի լիազորությունների շրջանակից դուրս:

Օրենքը քրեական հետապնդում հարուցելու նպատակով ԿԸՀ-ին լիազորում է որոշումներ կայացնել խորհրդարանական ընտրություններում առաջադրված թեկնածուների անձեռնմխելիությունը վերացնելու վերաբերյալ դիմումների վերաբերյալ, սակայն նման որոշումների ընդունման համար հստակ չափանիշներ չի սահմանում: Գլխավոր դատախազի միջնորդությունների հիման վրա ԿԸՀ-ն համաձայնություն է տվել 12 թեկնածուի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելուն՝ նրանցից 8-ը «Ուժեղ Հայաստան»-ից, իսկ 4-ը՝ «Բարգավաճ Հայաստան»-ից: Քննարկումներն անցկացվել են դատախազության խնդրանքով փակ նիստերում՝ նախաքննության գաղտնիության ապահովման հիմքով: ԿԸՀ-ի այդ որոշումներից երկուսը բողոքարկվել են վարչական դատարանում, որը գործերի գաղտնի բնույթի պատճառով չի հրապարակել իր որոշումները:

Վարչական դատարան է ներկայացվել ևս 57 բողոք: Դրանցից 21-ը մերժվել են, այդ թվում՝ 17-ը, որոնք վերաբերում էին հայցվորին ընտրողների ցուցակում ընդգրկելուն և բնակության կամ քաղաքացիության վերաբերյալ տեղեկանք տրամադրելուն, երկուսը՝ թեկնածուների գրանցմանը,

---

[77] Տե՛ս 2002 թվականի Վենետիկի հանձնաժողովի «Ընտրական հարցերում լավ փորձի կանոնագրքի» II.3.3.f բաժինը, որի համաձայն՝ «[հ]ամապատասխան ընտրատարածքում գրանցված բոլոր թեկնածուները և բոլոր ընտրողները պետք է իրավունք ունենան բողոքարկելու: Նման բողոքարկումների դեպքում իրավասությունը պետք է սահմանվի հնարավորինս լայն շրջանակի համար: Յուրաքանչյուր ընտրող տվյալ ընտրատարածքում և այնտեղ ընտրություններին մասնակցող յուրաքանչյուր թեկնածու պետք է հնարավորություն ունենա ներկայացնելու բողոք: Սակայն ընտրողների կողմից ընտրությունների արդյունքների վերաբերյալ բողոքարկումների համար կարող է սահմանվել ողջամիտ քվորում»:

[78] ԵԱՀԿ 1990 թվականի Կոպենհագենի փաստաթղթի 5.10-րդ կետում նշվում է, որ «յուրաքանչյուր ոք կունենա վարչական որոշումների դեմ իրավական պաշտպանության արդյունավետ միջոց՝ հիմնարար իրավունքների նկատմամբ հարգանքն ապահովելու նպատակով»:

և երկուսը՝ քարոզարշավի ընթացքում ենթադրյալ խախտումներին: Երեք բողոք բավարարվել է, ինչի արդյունքում դատարանը պարտավորեցրել է ԿԸՀ-ին հավատարմագրել դիտորդական կազմակերպություն, իսկ ՄՔԾ-ին՝ տրամադրել քաղաքացիության վերաբերյալ տեղեկանք: Տասներեք բողոք վերադարձվել է դիմողներին՝ թերությունները շտկելու նպատակով, իսկ մնացած գործերը, որոնք վերաբերում են վարչական իրավախախտումներին, դեռևս գտնվում են քննության փուլում: Թեկնածուների նկատմամբ քրեական հետապնդում հարուցելուն համաձայնություն տալու վերաբերյալ բողոքներից բացի, բոլոր գործերը քննվել են հրապարակային նիստերում՝ թափանցիկ կերպով և շահագրգիռ կողմերի մասնակցությամբ: Որոշումները կայացվել են օրենքով սահմանված ժամկետներում և, դեպքերի մեծ մասում, հրապարակվել են դատարանի պաշտոնական կայքում նույն օրը:

Ընտրությունների Դիտարկումը

Ընտրական օրենսգիրքը նախատեսում է ընտրությունների դիտարկում տեղական և միջազգային դիտորդների, ինչպես նաև կուսակցությունների (կամ կուսակցությունների դաշինքների) վստահված անձանց կողմից: Հավատարմագրման համար տեղական դիտորդական կազմակերպությունները պետք է ընտրությունների նշանակումից առնվազն մեկ տարի առաջ իրենց կանոնադրություններում ունենան ժողովրդավարության և մարդու իրավունքների պաշտպանության վերաբերյալ հստակ ձևակերպված դրույթ: Այս պահանջները անհարկի սահմանափակում են ընտրությունների դիտարկման հնարավորությունը և հակասում են միջազգային լավագույն փորձին, ինչպես նաև ԺՀՄԻԳ-ի և Վենետիկի հանձնաժողովի՝ նախկինում ներկայացված առաջարկություններին:[79]

2026 թվականի հունվարի օրենսդրական փոփոխություններով սահմանվել են լրացուցիչ պահանջներ՝ նպատակ ունենալով կանխել կուսակցությունների հետ փոխկապակցված կազմակերպությունների կողմից դիտորդական գործունեության իրականացումը, այդ թվում՝ գործունեության վերաբերյալ հաշվետվությունների և ֆինանսավորման աղբյուրների մասին տեղեկատվության ներկայացման պահանջը: Թեև դիտորդական խմբերի մեծ մասը աջակցել է այս փոփոխություններին, կան մտահոգություններ, որ գրանցված որոշ խմբեր դեռևս կապված են կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) հետ (տե՛ս «*Քվեարկության օր*» բաժինը): ԿԸՀ-ն գրանցել է դիտորդական առաքելություն իրականացնող 13 քաղաքացիական կազմակերպություն՝ ընդհանուր առմամբ 2672 դիտորդով, ինչպես նաև 8 միջազգային դիտորդական կազմակերպություն:[80] ԿԸՀ-ն մերժել է ԸԴԱՄ-ի մեկ հավանական դիտորդի հավատարմագրումը: «*Ականատեսը*» և «*Անկախ դիտորդ*» *ՀԿ դաշինքը* իրականացրել են նաև երկարաժամկետ դիտարկում և ներգրավել են ամենամեծ թվով դիտորդներին՝ համապատասխանաբար 785 և 752 դիտորդ: Մի շարք այլ քաղաքացիական հասարակության

---

79 2024 թվականի Վենետիկի հանձնաժողով-ի «Ընտրական դիտորդները որպես մարդու իրավունքների պաշտպաններ» զեկույց-ի 91-րդ պարբերությամբ սահմանվում է, որ «գրանցման պահանջները չպետք է լինեն չափազանց ձևական: [...] Որքան լայն են ընտրությունները դիտարկելու հնարավորությունները, այնքան ավելի հեշտ է ցանկացած շահագրգիռ անձի համար հանդես գալ որպես դիտորդ»:

80 ԿԸՀ-ն սկզբնապես մերժել էր «Մենք» դիտորդական կազմակերպության գրանցումը, քանի որ դրա կանոնադրությունում ուղղակիորեն նշված չէր ժողովրդավարության պաշտպանության վերաբերյալ դրույթը: Բողոքարկումից հետո Վարչական դատարանը բեկանել է այդ որոշումը՝ արձանագրելով, որ կանոնադրությունը պետք է գնահատվի դրա ընդհանուր բովանդակության հիման վրա, այլ ոչ թե ժողովրդավարության վերաբերյալ բառացի հղման առկայությամբ:

կազմակերպություններ ևս մշտադիտարկում են իրականացրել ընտրական գործընթացի առանձին բաղադրիչների նկատմամբ:[81]

Ընտրությունների Օր

Ընտրության օրը անցել է կազմակերպված և հանգիստ, իսկ դիտարկված ընտրատեղամասերի ճնշող մեծամասնությունում գործընթացը գնահատվել է դրական: Այս ընտրատեղամասերի ՏԸՀ-ների անդամների շրջանում կանայք լայնորեն ներկայացված էին՝ կազմելով անդամների 70 տոկոսը և նախագահների 51 տոկոսը:
Մատչելիությունը շարունակում էր մնալ լուրջ խնդիր . դիտարկված ընտրատեղամասերի միայն 45 տոկոսն էր գնահատվել որպես հասանելի հաշմանդամություն ունեցող ընտրողների համար, մինչդեռ դիտարկումների 27 տոկոսում ընտրատեղամասի դասավորությունը նրանց համար հարմար չէր: Ընտրատեղամասերում տեղադրվել էին տեսախցիկներ, որոնք ապահովում էին ուղիղ հեռարձակում՝ հնարավորություն տալով հետևել քվեարկության և ձայների հաշվարկի գործընթացներին:

Ընտրատեղամասերի բացման գործընթացը 188 դիտարկումներից 183-ում գնահատվել է դրական: Ընտրատեղամասերը բացվել են ժամանակին, և ՏԸՀ-ները հետևել են սահմանված ընթացակարգերին: Դիտարկված ընտրատեղամասերի 5 տոկոսում ոչ լիազորված անձինք, հիմնականում ընտրական գործընթացի մասնակիցների վստահված անձինք, միջամտել են ՏԸՀ-ների աշխատանքին:

Քվեարկության գործընթացը դիտարկվել է 1653 դեպքերում՝ 1403 ընտրատեղամասերում, և դիտարկումների 98 տոկոսում այն գնահատվել է դրական՝ որպես կանոնավոր, թափանցիկ և արդյունավետ: Բացասական գնահատականները հիմնականում պայմանավորված էին գերբեռնվածությամբ, ոչ պատշաճ դասավորությամբ և ընտրական գործընթացի մասնակիցների վստահված անձանց միջամտությամբ: Արձանագրվել են առանձին ընթացակարգային խախտումներ, այդ թվում՝ դիտարկումների 2 տոկոսում քվեատուփերը պատշաճ կերպով չեն կնքվել: Դիտարկումների 6 տոկոսում ընտրատեղամասերի ներսում կամ դրանցից 50 մետր շառավղով նկատվել են քարոզչական նյութեր կամ քարոզչական գործունեություն: Դիտարկումների 9 տոկոսում ՏԸՀ-երը գրանցել են բողոքներ կամ ՏԸՀ անդամների, դիտորդների կամ վստահված անձանց հատուկ կարծիքներ, որոնցից շատերը վերաբերում էին ենթադրյալ խախտումներին:

Քվեարկության գաղտնիությունը հիմնականում պահպանվել է, թեև դիտարկված ընտրատեղամասերի 4 տոկոսում ընտրողները միշտ չէ, որ գաղտնի պայմաններում են ընտրել իրենց քվեաթերթիկը: Բացի այդ, խմբակային քվեարկություն և այլ անձի փոխարեն քվեարկություն արձանագրվել են դիտարկումների համապատասխանաբար՝ 3 և 2 տոկոսում: Դիտարկումների շուրջ 4 տոկոսում ընտրողները քվեախցիկից դուրս են բերել չօգտագործված քվեաթերթիկները, ինչը հակասում է սահմանված ընթացակարգերին: Այս խնդիրները, ըստ երևույթին, հիմնականում պայմանավորված էին ընտրողների, հատկապես տարեց ընտրողների, կողմից ընթացակարգերի ոչ բավարար ըմբռնմամբ և ընտրատեղամասերի գերբեռնվածությամբ, այլ ոչ թե քվեարկության գաղտնիությունը խախտելու միտումնավոր փորձերով: Ընտրողների նույնականացման սարքերը (ԸՆՍ) արդյունավետ են գործել դիտարկված գրեթե բոլոր ընտրատեղամասերում, և ՏԸՀ-երը հիմնականում պահպանել են դրանց կիրառման հետ

[81] «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների օրակարգ» հասարակական կազմակերպությունը դիտարկել է շրջիկ արկղով քվեարկության գործընթացը՝ կենտրոնանալով հոգեսոցիալական հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների վրա: «Լուսաստղ» կազմակերպությունը ուշադրություն է դարձրել հաշմանդամություն ունեցող անձանց համար ընտրական գործընթացի ներառականությանը, իսկ «Հայաստանի Հելսինկյան կոմիտե»-ն իրականացրել է ավելի փոքրածավալ դիտորդական առաքելություն՝ մշտադիտարկելով օրենքի գերակայության և մարդու իրավունքների պահպանումը ընտրական գործընթացի ընթացքում:

կապված ընթացակարգերը:[82] Տեխնիկական խնդիրները սահմանափակ բնույթ են կրել, թեև մի շարք դեպքերում արձանագրվել են անհամապատասխանություններ ԸՆՍ-երի կողմից տրամադրված տվյալների և ընտրողների թղթային ցուցակների միջև:

Ընտրական գործընթացի մասնակից քաղաքական ուժերի վստահված անձինք հիմնականում՝ «Ուժեղ Հայաստան»-ից և «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունից, ներկա են եղել դիտարկված ընտրատեղամասերի 98 տոկոսում /համապատասխանաբար ՝ 90 և 87 տոկոս ներկայացվածությամբ/:

Քվեարկության գործընթացին միջամտություն արձանագրվել է դիտարկումների 6 տոկոսում, հիմնականում նշված երկու քաղաքական ուժերի վստահված անձանց կողմից, որոնք դուրս են եկել իրենց դիտորդական գործառույթների շրջանակից՝ ուղղորդելով ընտրողներին, տալով ընթացակարգային ցուցումներ, գտնվելով քվեախցիկներին կամ քվեատուփերին չափազանց մոտ կամ այլ կերպ ստանձնելով ՏԸՀ-երի գործառույթները: Քաղաքացիական դիտորդները ներկա են եղել դիտարկումների 52 տոկոսում՝ նպաստելով գործընթացի թափանցիկությանը: Ներկայության իրավունք չունեցող անձինք նկատվել են ընտրատեղամասերի 4 տոկոսում, հիմնականում ոստիկանության աշխատակիցներ, թեև դա հազվադեպ է ազդել քվեարկության ընթացքի վրա:

Ձայների հաշվարկը դրական է գնահատվել դիտարկված 158 ընտրատեղամասերից 144-ում և ընդհանուր առմամբ եղել է թափանցիկ, արդյունավետ ու կանոնակարգված: Ընտրական գործընթացի մասնակիցների ներկայացուցիչները ներկա են եղել բոլոր դիտարկված հաշվարկների ընթացքում, իսկ քաղաքացիական դիտորդները՝ դիտարկումների գրեթե կեսում: ՄԸԴԱ-ի դիտորդները կարողացել են առանց սահմանափակումների հետևել ձայների հաշվարկի գործընթացին, իսկ ՏԸՀ-երը լիարժեք համագործակցել են նրանց հետ:

Որոշ ընտրատեղամասերում արձանագրվել են ընթացակարգային թերություններ: 29 դիտարկումների ընթացքում ստորագրությունների թիվը չի համապատասխանել ԸՆՍ-ի կողմից տպագրված հաստատման կտրոնների թվին: Որպես կանոն, ստորագրությունների թիվը կտրոնների թվից պակաս է եղել մեկ կամ երկու միավորով, ինչը վկայում է, որ այս երկաստիճան վերահսկողական մեխանիզմը միշտ չէ, որ կիրառվել է հետևողական կերպով: Քվեաթերթիկների վավերության վերաբերյալ որոշումները գրեթե բոլոր դիտարկումներում գնահատվել են որպես հետևողական, թեև մի քանի դեպքերում արձանագրվել են տարաձայնություններ ՏԸՀ անդամների միջև: Դիտարկված գրեթե բոլոր տեղամասերում քվեարկության արդյունքների վերաբերյալ արձանագրությունները ամբողջությամբ լրացվել և ճշգրտվել են, թեև 14 ՏԸՀ դժվարություններ է ունեցել դրանց լրացման հարցում: Ավելի լուրջ խախտումների թվում էին 11 դիտարկման ընթացքում ՏԸՀ անդամ չհանդիսացող անձանց անմիջական մասնակցությունը ձայների հաշվարկին և 6 դեպքում՝ նախապես ստորագրված արձանագրությունների օգտագործումը: 8 դիտարկման ընթացքում ՏԸՀ-ները չեն փակցրել արդյունքների արձանագրության պատճենը հանրային ծանոթացման համար:

ՄԸԴԱ-ի դիտորդները դրական են գնահատել արդյունքների ամփոփման գործընթացը 50 դիտարկումներից 43-ում: Սակայն ամբողջ երկրի տարածքում գործող 38 ԸԸՀ-երից 11-ում ԿԸՀ-ի կողմից ԸԸՀ-ներին տրված բանավոր ցուցումների հիման վրա կիբեռանվտանգության նկատառումներով ՄԸԴԱ-ի դիտորդներին արգելվել է հետևել տվյալների մուտքագրման

---

82 ԿԸՀ-ի նախնական արդյունքների համաձայն՝ յուրաքանչյուր ընտրատեղամասում լրացուցիչ ընտրացուցակներում ընդգրկվել է միջինում մեկից պակաս ընտրող, այդ թվում՝ շրջիկ արկղով քվեարկողներ, վեց ամսից ավելի ժամկետով վավերականությունը կորցրած անձը հաստատող փաստաթղթեր ունեցող անձինք (ներառյալ արտերկրում բնակվող քաղաքացիները), ինչպես նաև դատարանի որոշմամբ ընտրացուցակներում ընդգրկված ընտրողները:

գործընթացին, ինչը սահմանափակել է գործընթացի թափանցիկությունը: Ընտրական նյութերի ընդունման և արդյունքների ամփոփման գործընթացը գնահատվել է որպես կազմակերպված, մասնագիտական և արդյունավետ, սակայն դիտորդները նաև արձանագրել են գերբեռնվածություն և գործընթացի իրականացման ձգձգումներ, ինչպես նաև նշել, որ որոշ ԸԸՀ-ների տարածքները լիովին հարմարեցված չեն եղել այդ նպատակների համար: Տեղական դիտորդները ներկա են եղել 48 դիտարկման ընթացքում, մինչդեռ ընտրական գործընթացի մասնակիցների վստահված անձինք՝ ընդամենը 5 դիտարկման դեպքում: 6 դիտարկման ընթացքում ՏԸՀ-ների անդամները ստիպված են եղել ուղղել որոշ ՏԸՀ-ների արդյունքների արձանագրություններում առկա թվաբանական սխալները: Դիտարկված բոլոր ԸԸՀ-ները պարբերաբար հրապարակել են արդյունքների վերաբերյալ թարմացվող տվյալներ, իսկ ԿԸՀ-ն համազգային նախնական արդյունքների առցանց հրապարակումը սկսել է ժամը 00:00-ին: Մասնակցության ցուցանիշը կազմել է 58,97 տոկոս:

Ընտրատեղամասերի փակման պահին ԿԸՀ-ն հայտնել է ընտրության օրը ներկայացված 23 բողոքի մասին, որոնք հիմնականում վերաբերում էին ընտրողների ցուցակներում առկա անճշտություններին և լռության օրվա պահանջների խախտումներին: ԸԸՀ-երին ներկայացված բողոքների մասին տեղեկություններ չեն հաղորդվել: Ընտրության օրվա ընթացքում իրավապահ մարմինները ձեռնարկել են մի շարք գործողություններ՝ կապված ձայների ենթադրյալ գնման և ընտրական այլ իրավախախտումների հետ: [83] Քվեարկությունից հետո ընդդիմության ներկայացուցիչները պնդել են, որ այդ միջոցառումները ընտրովի կերպով ուղղված են եղել իրենց աջակիցների դեմ:[84]

Սույն զեկույցի անգլերեն թարգմանությունը միակ պաշտոնական փաստաթուղթն է Հայերենով առկա փաստաթուղթը հանդիսանում է ոչ պաշտոնական թարգմանություն:

---

83 Գլխավոր դատախազության տվյալներով՝ հաղորդվել է ընտրություններին առնչվող ենթադրյալ 143 քրեական դեպքի մասին: 21 դեպքով նախաձեռնվել է քննություն, իսկ 48 անձի նկատմամբ հարուցվել է քրեական հետապնդում: Քննչական կոմիտեն գրանցել է ընտրական իրավախախտումների վերաբերյալ 129 հաղորդում և նախաձեռնել 59 քրեական վարույթ, որոնցից 30-ը վերաբերում էին բազմակի քվեարկությանը կամ այլ անձի փոխարեն քվեարկելուն, 17-ը՝ քվեարկության գաղտնիության խախտմանը, 9-ը՝ ընտրական իրավունքների կամ ընտրական հանձնաժողովների աշխատանքի խոչընդոտմանը, և 3-ը՝ կեղծ տեղեկությունների տարածմանը: Այս վարույթների շրջանակում ձերբակալվել է 9 անձ: Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը նախաձեռնել է քննություններ ձայների գնման հետ կապված ավելի քան 11 դեպքով, և առնվազն 24 անձ ձերբակալվել է այդ մեղադրանքների հիման վրա:

84 Այդ թվում՝ «Ուժեղ Հայաստան»-ի, «Բարգավաճ Հայաստան» կուսակցության և «Հայաստան» դաշինքի ղեկավարները:

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ԵՎ ՇՆՈՐՀԱԿԱԼԱԿԱՆ ԽՈՍՔ

Երևան, 8 հունիսի 2026թ. Նախնական արդյունքների և եզրակցությունների մասին սույն հայտարարությունը կազմվել է ԵԱՀԿ ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակի (ԺՀՄԻԳ), ԵԱՀԿ խորհրդարանական վերաժողովի (ԵԱՀԿ ԽՎ), Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի (ԵԽԽՎ) և Եվրոպական խորհրդարանի (ԵԽ) ընդհանուր նախաձեռնությամբ: Գնահատումն իրականացվել է որոշելու արդյոք ընտրություններն անց են կացվել ԵԱՀԿ հանձնառություններին և այլ միջազգային պարտավորություններին, ժողովրդավարական ընտրությունների չափանիշներին և ազգային օրենսդրությանը համապատասխան:

Ֆարահ Քարիմին ԵԱՀԿ գործող նախագահի կողմից նշանակվել է որպես Հատուկ համակարգող և ԵԱՀԿ կարճաժամկետ դիտորդների ղեկավար: Յանեզ Լենարչիչը գլխավորել է 2026 թվականի ապրիլի 22-ին Հայաստան գործուղած ԺՀՄԻԳ Ընտրությունների դիտորդական առաքելությունը:

Նախնական արդյունքների և եզրակցությունների մասին հայտարարությունը արվում է մինչև ընտրությունների արդյունքների ամփոփումը: Ընտրությունների վերջնական գնահատումը կախված կլինի մասամբ ընտրական գործընթացի հաջորդ փուլերի իրականացումից՝ ներառյալ հաշվարկը, աղյուսակավորումը և արդյունքների հայտարարումը, հետընտրական հնարավոր բողոքների վարումը և հնարավոր երկրորդ փուլը: ԺՀՄԻԳ-ը հրապարակի համապարփակ վերջնական զեկույց՝ ներառյալ առաջարկներ հնարավոր բարեփոխումների համար, ընտրական գործընթացի ավարտից հետո մի քանի ամիս անց: ԵԱՀԿ ԽՎ-ն իր զեկույցը կներկայացնի Մշտական հանձնաժողովի հաջորդ նիստում: ԵԽԽՎ-ն իր զեկույցը կներկայացնի 2026 թվականի սեպտեմբերին Ստրասբուրգում կայանալիք նստաշրջանի ընթացքում: Եվրոպական խորհրդարանը զեկույց կներկայացնի Հարավային Կովկասի հետ հարաբերությունների պատվիրակության առաջիկա նիստերից մեկում, ինչպես նաև Եվրոպական ժողովրդավարության պաշտպանության հատուկ հանձնաժողովում:

ԺՀՄԻԳ-ի ԸԴԱ-ն ներառում է մայրաքաղաքում տեղակայված 15 փորձագետ և պետության ողջ տարածքում գործուղված 30 երկարաժամկետ դիտորդ: Քվեարկության օրը 42 երկրներից գործուղվել է 457 դիտորդ, այդ թվում `ԺՀՄԻԳ-ի կողմից գործուղված 322 դիտորդ, ինչպես նաև ԵԱՀԿ ԽՎ-ի 93 անդամից բաղկացած պատվիրակություն, Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի (ԵԽԽՎ) 27 անդամից բաղկացած պատվիրակություն և Եվրոպական խորհրդարանի 15 անդամից բաղկացած պատվիրակություն: Կանայք կազմել են դիտորդների 46 տոկոսը: Ընտրատեղամասերի բացման գործընթացը դիտարկվել է 108 ընտրատեղամասում, իսկ քվեարկությունը՝ երկրի ողջ տարածքում գտնվող 1403 ընտրատեղամասում: Ձայների հաշվարկը դիտարկվել է 158 ընտրատեղամասում, իսկ արդյունքների ամփոփումը՝ 38 ԸԸՀ-ում:

ՄԸԴԱ-ն ցանկանում է շնորհակալություն հայտնել ՀՀ կառավարությանը՝ ընտրությունները դիտարկելու հրավերի համար, ինչպես նաև ՀՀ Արտաքին գործերի նախարարությանը և ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովին աջակցության համար: ՄԸԴԱ-ն ցանկանում է համագործակցության համար շնորհակալություն հայտնել նաև բոլոր մյուս պետական մարմիններին, լրատվամիջոցներին, քաղաքացիական հասարակության կազմակերպություններին, ինչպես նաև միջազգային հանրության ներկայացուցիչներին:

Տեղեկատվության համար կարող եք կապվել ստորև նշված անձանց հետ՝

- Յանեզ Լենարչիչ, ԺՀՄԻԳ ԸԴԱ ղեկավար, Երևան (janez.lenarcic@odihr.am),
- Թոմաս Ռայմեր, ԺՀՄԻԳ խոսնակ (thomas.rymer@odihr.pl) կամ Վիտտորիա Զանելատի, ԺՀՄԻԳ ընտրական հարցերով խորհրդական, Վարշավա (vittoria.zanellati@odihr.pl),
- Ստեֆանի Կոլտչանով, ԵԱՀԿ ԽՎ ընտրությունների հարցերով ղեկավար, էլ. փոստ՝ stephanie.koltchanov@oscepa.dk :
- Բոգդան Տորկըտորիու, ԵԽԽՎ ընտրական հարցերով ավագ պատասխանատու, հեռ.՝ +33 650 39 2940: Bogdan.TORCATORIU@coe.int
- Ռաֆայելե Լուիզե, Եվրոպական խորհրդարանի ադմինիստրատոր, էլ. փոստ՝ raffaele.luise@europarl.europa.eu

ԺՀՄԻԳ ԸԴԱ-ի հասցեն Հայաստանում՝
Մովսես Խորենացու փողոց 15/1, 0010, Երևան
Հեռ.՝ +374 33 200 515:
էլ. փոստ. office@odihr.am
https://odihr.osce.org/node/662896